



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(66)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2023

Բանբերը հրատարակվում է տարեկան երկու անգամ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

Вестник издается два раза в год по решению ученого совета Государственного университета имени В. Брюсова.

Bulletin is published twice a year by the decision of Brusov State University Scientific Council.

Խմբագրական խորհուրդ՝

Գյուրջինյան Դավիթ	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ (<i>գլխավոր խմբագիր, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)
Եղիազարյան Գայանե	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>գլխավոր խմբագրի տեղակալ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)
Խաչիկյան Անահիդ	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)
Աբրահամյան Կարինե	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)
Գասպարյան Գայանե	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)
Համբարձումյան Դիանա	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)
Աբրահամյան Սուրեն	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)
Էթարյան Ելենա	բանասիրական գիտությունների դոկտոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)
Սարգսյան Իննա	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան</i>)

Թոփուզյան Աիդա	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան</i>)
Խաչատրյան Լալիկ	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան</i>)
Խաչատրյան Կարեն	պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ</i>)
Մկրտչյան Թաթուլ	տնտեսագիտության դոկտոր (<i>Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան</i>)
Օրդուխանյան Էմիլ	քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ (<i>ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ</i>)
Սարվազյան Լիլիթ	փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (<i>ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ</i>)
Պախսարյան Նարայա	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Մոսկվայի պետական համալսարան, ՌԴ</i>)
Սերեբրյակովա Սվետլանա	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Հյուսիս-Կովկասյան ֆեդերատիվ համալսարան, Ռուսաստանի թարգմանիչների միության Ստավրոպոլյան մարզային բաժանմունք, ՌԴ</i>)
Գլտրովա Ժաննա	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ (<i>Էմանուել Կանյի անվան կրթության և հումանիտար գիտությունների ինստիտուտ, Կալինինգրադ, ՌԴ</i>)
Շահվերդյան Անուշ	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ (<i>Համաշխարհային բանկի կրթության գծով միջազգային խորհրդարան, Վաշինգտոն, ԱՄՆ</i>)

Խմբագրական կազմ՝

Թովմասյան Հրանուշ	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հեքեքյան Նարինե	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գևորգյան Լիլիթ	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Բաղայան Լիլիթ	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ղազարյան Դոնարա	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Սաֆարյան Լիանա	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հովհաննիսյան Ֆրունզե	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ռաֆայելովա Քրիստինե	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ապրեսովա Սոնյա	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ղարիբյան Դավիթ	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հարությունովա Քրիստինա	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մուսեյան Ռուզան	բանասիրական գիտությունների թեկնածու

Տեխնիկական խմբագիր՝

Փիլավջյան Հասմիկ

Редакционный совет:

Гюрджинян Давид	кандидат филологических наук, доцент (гл. редактор, Государственный университет имени В. Брюсова)
Егуазарян Гаяне	доктор филологических наук, профессор (зам. гл. редактора, Государственный университет имени В. Брюсова)

Хачикян Анаида	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Абраамян Карине	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Гаспарян Гаяне	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Амбардзумян Диана	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Абраамян Сурен	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Этарян Елена	доктор филологических наук (Государственный университет имени В. Брюсова)
Сарксян Инна	доктор педагогических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Топузян Аида	доктор педагогических наук, профессор (Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна)
Хачатрян Лалик	доктор филологических наук, профессор (Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна)
Хачатрян Карен	доктор исторических наук, профессор (Ереванский государственный университет, факультет истории)
Мкртчян Татул	доктор экономических наук (Государственный экономический университет Армении)
Ордуханян Эмиль	кандидат политических наук, доцент (Институт философии, социологии и права (НАН РА))

<i>Сарвазян Лилит</i>	кандидат философических наук, доцент (Институт философии, социологии и права (НАН РА))
<i>Пахсарян Наталья</i>	доктор филологических наук, профессор (Московский государственный университет, РФ)
<i>Серебрякова Светлана</i>	доктор филологических наук, профессор (Северо-Кавказский федеральный университет, Ставропольское краевое отделение Союза переводчиков России, РФ)
<i>Глотова Жанна</i>	кандидат педагогических наук, доцент (Гуманитарно-педагогический институт им. Эммануила Канта, Калининград, РФ)
<i>Шахвердян Ануш</i>	кандидат педагогических наук, доцент (Международный консультант Всемирного банка по образованию, Вашингтон, США)

Редакционная коллегия:

<i>Товмасян Грануш</i>	доктор филологических наук, профессор
<i>Экекян Нарине</i>	кандидат филологических наук, доцент
<i>Геворгян Лилит</i>	кандидат филологических наук, доцент
<i>Бадалян Лилит</i>	кандидат филологических наук, доцент
<i>Казарян Донара</i>	кандидат филологических наук, доцент
<i>Сафарян Лиана</i>	кандидат филологических наук, доцент
<i>Оганнесян Фрунзе</i>	кандидат филологических наук, доцент
<i>Рафаелова Кристина</i>	кандидат филологических наук, доцент
<i>Апресова Соня</i>	кандидат филологических наук, доцент
<i>Гарибян Давид</i>	кандидат филологических наук, доцент
<i>Арутюнова Кристина</i>	кандидат педагогических наук, доцент
<i>Мусеян Рузан</i>	кандидат филологических наук

Технический редактор:

Пилавджян Асмик

Editorial Council:

<i>Gyurjinyan Davit</i>	Candidate of Sciences (Philology), Associate Professor (<i>Brusov State University</i>)
<i>Yeghiazaryan Gayane</i>	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Brusov State University</i>)
<i>Khachikyan Anaida</i>	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Brusov State University</i>)
<i>Abrahamyan Karine</i>	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Brusov State University</i>)
<i>Gasparyan Gayane</i>	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Brusov State University</i>)
<i>Hambardzumyan Diana</i>	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Brusov State University</i>)
<i>Abrahamyan Suren</i>	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Brusov State University</i>)
<i>Etaryan Yelena</i>	Doctor of Sciences (Philology), (<i>Brusov State University</i>)
<i>Sargsyan Inna</i>	Doctor of Sciences (Pedagogy), Professor (<i>Brusov State University</i>)
<i>Topuzyan Aida</i>	Doctor of Sciences (Pedagogy), Professor (<i>Armenian State Pedagogical University after KH. Abovyan</i>)
<i>Khachatryan Lalik</i>	Doctor of Sciences (Pedagogy), Professor (<i>Armenian State Pedagogical University after KH. Abovyan</i>)
<i>Khachatryan Karen</i>	Doctor of Sciences (History), Professor (<i>Yerevan State University, Faculty of History</i>)
<i>Mkrtchyan Tatul</i>	Doctor of Sciences (Economics) (<i>Armenian State University of Economics</i>)
<i>Ordukhanyan Emil</i>	Candidate of Sciences (Political Sciences), Associate Professor (<i>Institute of Philosophy, Sociology And Law (NAS RA)</i>)
<i>Sarvazyan Lilit</i>	<i>Institute of Philosophy, Sociology And Law (NAS RA)</i>
<i>Pakhsaryan Natalya</i>	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Moscow State University, RF</i>)
<i>Serebryakova Svetlana</i>	Doctor of Sciences (Philology), Professor (<i>North-Caucasian Federal University, Stavropol Regional Department of the Russian Translator's Union, RF</i>)
<i>Glотоva Zhanna</i>	Candidate of Sciences (Philology), Associate Professor (<i>Immanuel Kant Baltic Federal University, Kaliningrad, RF</i>)

Shahverdyan Anush Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor (*World Bank International Consultant on Education, Washington, USA*)

Editorial Board:

Tovmasyan Hranush Doctor of Sciences (Philology), Professor
Heqeqyan Narine Candidate of Sciences (Philology), Associate Professor
Gevorgyan Lilit Candidate of Sciences (Philology), Associate Professor
Badalyan Lilit Candidate of Sciences (Philology), Associate Professor
Kazaryan Donara Candidate of Sciences (Philology), Associate Professor
Safaryan Liana Candidate of Sciences (Philology), Associate Professor
Hovhannisyan Frunze Candidate of Sciences (Philology), Associate Professor
Rafayelova Qristine Candidate of Sciences (Philology), Associate Professor
Apresova Sonya Candidate of Sciences (Philology), Associate Professor
Gharibyan David Candidate of Sciences (Philology), Associate Professor
Harutyunova Kristina Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor
Museyan Ruzan Candidate of Sciences (Philology)

Technical Editor:

Pilavjyan Hasmik

Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի 1(66): - Երևան, Լինգվա, 2023, 142 էջ:

Вестник Государственного университета имени В. Брюсова 1(66). - Ереван, Лингва, 2023, 142 с.

Bulletin of Brusov State University 1(66). - Yerevan, Lingva, 2023, 142 pages.

ISSN 1829-3107

© Լինգվա, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ СОДЕРЖАНИЕ CONTENTS		
ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ ДАВИД ГЮРДЖИНЯН DAVIT GYURJINYAN	ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԱՅԲԲԵՆԱԿԱՊ ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱՑՈՒՅՑ ԲԱՌԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ СПРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ БУКВОУКАЗЫВАЮЩИХ СЛОВ АЗБУЧНЫХ АКРОСТИХОВ НЕРСЕСА ШНОРАЛИ COMPARATIVE ANALYSIS OF LETTER INDICATING WORDS OF NERSES SHNORALI'S ALPHABETIC ACROSTICS	13
ՀՐԱՆՈՒՇ ԹՈՎՄԱՍՅԱՆ ГРАНУШ ТОВМАСЯН HRANUSH TOVMASYAN	ՏԵՔՍՏԻ ՄԵԿՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ. ՏԵՔՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ИНТЕРПРЕТАЦИЯ ТЕКСТА: СТРУКТУРНЫЕ ХАРАКТЕРИСТИКИ ТЕКСТА С ТОЧКИ ПСИХОЛИНГВИСТИКИ TEXT INTERPRETATION: STRUCTURAL CHARACTERISTICS OF THE TEXT FROM THE PSYCHOLINGUISTIC PERSPECTIVE	34

ՄԵՐԻ ԿՆՅԱԶՅԱՆ	ԶԻՆԱՐԵՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	44
MЭРИ КНЯЗЯН	О ТЕРМИНОЛОГИИ ВИДОВ КИТАЙСКИХ СЛОВАРЕЙ	
MERI KNYAZYAN	ON TERMINOLOGY OF TYPES OF CHINESE DICTIONARIES	
ՆԵԼԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ՈՒԵԼՍԱԿԱՆ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ ԵՎ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	55
НЕЛЛИ АРУТЮНЯН	О ЛЕКСИЧЕСКИХ И ЭТИМОЛОГИЧЕСКИХ ОСОБЕННОСТЯХ ВАЛЛИЙСКИХ ИМЕН СОБСТВЕННЫХ	
NELLY HARUTYUNYAN	ON LEXICAL AND ETYMOLOGICAL PECULIARITIES OF WELSH PERSONAL NAMES	
ԺԱԿԼԻՆ ՄԻՆԱՍՅԱՆ	ՀՈՒՏՈՐԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐԻ ՓԱՍՏԱՐԿԻՉ ՆԵՐՈՒԺԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԲԱՌԱԿՐԿՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԴԱՐՁՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ	72
ЖАКЛИН МИНАСЯН	АНАЛИЗ АРГУМЕНТАТИВНОГО ПОТЕНЦИАЛА РИТОРИЧЕСКИХ ПРИЕМОВ, ВЫРАЖЕННОГО ПОСРЕДСТВОМ ЛЕКСИЧЕСКОГО ПОВТОРА (НА ПРИМЕРЕ СИНТАКСИЧЕСКИХ ФИГУР РЕЧИ)	
ZHAKLIN MINASYAN	ANALYSIS OF THE ARGUMENTATIVE POTENTIAL OF RHETORICAL DEVICES ON THE EXAMPLE OF SYNTACTIC FIGURES OF SPEECH	

<p>ԷՄՄԱ ՄԻՐԶՈՅԱՆ</p> <p>ЭММА МИРЗОЯН</p> <p>EMMA MIRZOYAN</p>	<p>ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՌԵՄԱՐԿԻ «ԵՐԵՔ ԸՆԿԵՐ» ՎԵՊՈՒՄ</p> <p>ПРОЯВЛЕНИЕ ПОСЛЕВОЕННОГО СИНДРОМА В РОМАНЕ РЕМАРКА "ТРИ ТОВАРИЩА"</p> <p>MANIFESTATION OF POST-WAR SYNDROME IN REMARK'S NOVEL "THREE COMRADES"</p>	<p>86</p>
<p>ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏՉՅԱՆ</p> <p>МКРТЫЧ МКРТЧЯН</p> <p>МКРТИЧ МКРТЧЯН</p>	<p>ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԵՐՊԸ ՅՈՒՐԻ ԼՈՏՄԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ</p> <p>КОММУНИКАТИВНЫЙ АСПЕКТ ПЕРЕВОДА В СВЕТЕ ТЕОРИИ КОММУНИКАЦИИ ЮРИЯ ЛОТМАНА</p> <p>COMMUNICATIVE ASPECT OF TRANSLATION FROM THE PERSPECTIVE OF JURI LOTMAN'S THEORY OF COMMUNICATION</p>	<p>101</p>
<p>ԶԱՐՈՒՀԻ ՈՍԿԱՆՅԱՆ</p> <p>ЗАРУИ ВОСКАНЯН</p> <p>ZARUHI VOSKANYAN</p>	<p>Ա. ՄՈՐԱՎԻԱՅԻ «ՉՈՉԱՐԱ» ԵՎ «ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔ» ՎԵՊԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p> <p>ОБЩАЯ ЯЗЫКОВАЯ ХАРАКТЕРИСТИКА И ОСОБЕННОСТИ АРМЯНСКОГО И РУССКОГО ПЕРЕВОДОВ РОМАНОВ А. МОРАВИА «ЧОЧАРА» И «ПРЕЗРЕНИЕ»</p> <p>GENERAL LINGUISTIC</p>	<p>116</p>

	CHARACTERISTICS AND FEATURES OF THE ARMENIAN AND RUSSIAN TRANSLATIONS OF A. MORAVIA'S NOVELS "CHOCHARA" AND "CONTEMPT"	
ՔՐԻՍՏԻՆԵ ՌԱՖԱՅԵԼՈՎԱ	ԳՈՒՆԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԵՎ ԱՐԱԲ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ	
КРИСТИНЕ РАФАЕЛОВА	КОЛОРОНИМЫ И ИХ СИМВОЛИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ В АРМЯНСКОЙ И АРАБСКОЙ ЛИНГВОКУЛЬТУРАХ	127
KRISTINE RAFAYELOVA	COLOUR NAMES AND THEIR SYMBOLIC MINING IN ARMENIAN AND ARABIC LINGUOCULTURES	
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ		
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ		139
INFORMATION ABOUT THE AUTHORS		

**ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԱՅՐԲԵՆԱԿԱՊ
ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱՑՈՒՅՑ ԲԱՌԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ԴՎՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

Համառոտագիր

Ներսես Շնորհալին հեղինակ է երկու տասնյակից ավելի չափածո այնպիսի ստեղծագործությունների, որոնց տողերը կամ տները սկսվում են հայոց այբուբենի տառերի կարգով՝ սկզբից մինչև վերջ՝ Ա-ից մինչև Ք, կամ էլ հակադարձ հաջորդականությամբ՝ Ք-ից մինչև Ա: Այբբենակապ չորս ստեղծագործություններ, որոնք հայտնի են «Տաղ ամետեաց Աստուածածնին, ի տէր Ներսիսէ Հայոց կաթողիկոսէ», «Տաղ ծննդեան ճրագալուցին, ի տէր Ներսէս կաթողիկոսէ», «Գովասանութիւն գրոյն այբուբենի», «Նորին խրատք ոգեշահք» վերնագրերով, Շնորհալու ստեղծագործությունների ժողովածուներում զետեղվում են որոշակի վերապահությամբ:

Վստահաբար Շնորհալու գրչին պատկանող այբբենակապ ստեղծագործությունների և կասկած հարուցող նույնատիպ գործերի առաջին՝ տառացույց բառերի համեմատական վերլուծությամբ փորձ է արվում որոշելու դրանց հեղինակային պատկանելությունը՝ արդյո՞ք դրանք բազմաշնորհ կաթողիկոսի գրական ժառանգության մաս են կազմում, թե՞ ոչ:

Այբբենակապ ստեղծագործությունների տառացույց բառերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ վերոհիշյալ չորս տաղերն ամենայն հավանականությամբ Ներսես Շնորհալու գրչի արգասիքն են:

Հիմնաբառեր՝ Ներսես Շնորհալի, այբբենակապ (այբբենային) բանաստեղծություն, տրագլոխ տառ, տառացույց բառ, վիճակագրական վերլուծություն, ոճաչափություն, հեղինակային պատկանելություն, ստեղծագործական աշխատանոց

Ներածություն

Ամենայն հայոց կաթողիկոս սուրբ Ներսես Շնորհալին (մոտ. 1100-1173 թթ.) եկեղեցական, մշակութային, քաղաքական, գրական, գիտական և մանկավարժական բեղմնավոր գործունեություն է ծավալել, իր բազմաժանր ստեղծագործություններով հաստատել հայ գրականության, մասնավորապես բանաստեղծական մշակույթի առաջընթացը:

Բազմաշնորհ գործչի գրական հսկայական ժառանգության մեջ նկատելի տեղ են զբաղեցնում այբբենակապ ստեղծագործությունները: «Այբբենակապ» են կոչվում չափածո այն ստեղծագործությունները, որոնք հորինվել են հայերենի այբուբենի կարգով (**Ա**-ից մինչև **Ք** կամ հակառակը), այլ կերպ կոչում են նաև «այբբենական բանակապ» (Բախչինյան, էջ 98): Շնորհալու այբբենակապ ստեղծագործությունները զետեղված են երանաշնորհ հայրապետի երկերի տարբեր գրքերում (Ներսէս Շնորհալի, 1830, Ներսես Շնորհալի, 1987, «Մատենագիրք Հայոց», 2018), այբբենային բանաստեղծությունների ժողովածուում (Գրիգորեան, 2016), առանձին հրատարակություններում (Սուրբ Ներսէս Շնորհալի, 2017) և այլն:

Ներսես Շնորհալու այբբենակապ ստեղծագործությունների բառային կազմի, հատկապես տառացույց (կամ տնագլուխ տառերով կազմված) բառերի համեմատական վերլուծությունը սոսկ բառագիտական-լեզվաբանական նպատակ չունի: Այդ համեմատությունը հետաքրքրական է այլ առումով ևս. այն կարող է որոշակի գաղափար տալ Շնորհալու ստեղծագործական աշխատանոցի մասին առհասարակ, ինչպես և քերթողի բառ ընտրելու մոտեցումների, նախասիրությունների, փորձի, ճաշակի և այլ իրողությունների վերաբերյալ մասնավորապես:

Միաժամանակ համեմատական վերլուծության միջոցով կարող են ինչ-ինչ հիմքեր առաջ գալ, որոնք որոշ չափով կնպաստեն այս կամ այն ստեղծագործության հեղինակային պատկանելության հարցը պարզելիս (այսպիսով խնդիրն ավելի շատ ոճաչափական նշանակություն է ձեռք բերում): Շնորհալուն վերագրվող մի քանի տաղերի մասին, օրինակ, նշվել է, որ դրանք «որոշ ձեռագրերում պահպանվել են առանց հեղինակի, խիստ հարազատ են Ներսես Շնորհալուն և կարող են պատկանել նրա գրչին», ինչպես և կան նմուշներ, «որոնք հանդես են գալիս Ներսես Շնորհալու անունով, բայց սոսկ հետագայի ձեռագրերում և կարող էին նրան վերագրված լինել թյուրիմացաբար»: այդպիսիք «չեն ընդգրկված հեղինակի տաղաշարքում, մինչև երևան կգան հավաստի փաստեր» (Ա. Քյոշկերյան, 1977, էջ 141):

Ձեռագիր մատյաններում, ինչպես նաև տպագիր աղբյուրներում Ներսես Շնորհալուն են վերագրվել այբբենակապ ստեղծագործություններ, որոնք հայտնի են հետևյալ վերնագրերով՝

«Տաղ աւետեաց Աստուածածնին, ի տէր Ներսիսէ Հայոց կաթողիկոսէ» (առաջին տողը՝ «Այսար երեւի անտեսն ի բարձանց....») (Ներսես Շնորհալի, 1987, էջ 333-335). աղբյուրներում այս տաղը հաճախ անհեղինակ է, մի տեղում վերագրվել է Ներսես Լամբրոնացուն, մի քանի անգամ՝ Ներսես Շնորհալուն,

«Տաղ ծննդեան ճրագալուցին, ի տէր Ներսէս կաթողիկոսէ» (առաջին տողը՝ «Անմահից արքայն....») (Ներսես Շնորհալի, 1987, էջ 336-339), երկու աղբյուրում պահպանված է Ներսես կաթողիկոսի անունով, մնացած տեղերում անհեղինակ է),

«Գովասանութիւն գրոյն այբուբենի» (առաջին տողը՝ «Անմահութեան աղբեր է սա....») (Սուրբ Ներսէս Շնորհալի, 2017, էջ 18-25),

«Նորին խրատք ոգեշահք» (առաջին տողը՝ «Աստուածային բանից լլսել....») (Գրիգորեան, 2016, էջ 185-186):

Սրանք Շնորհալի հայրապետի ստեղծագործությունների շարքում գետեղվել են, ինչպես հետազոտողներն են ասում, որոշակի տարակույսով, քիչ թե շատ վերապահությամբ կամ ենթադրության հիման վրա, բայց վստահության մեծ պաշարով (Ներսես Շնորհալի, 1987, էջ 419, Գրիգորեան, էջ 720, 722): Նշվում են այդ ստեղծագործությունները Շնորհալու ժողովածուներում կամ Շնորհալու անունով այլուր հրատարակելու որոշում ընդունելու հիմնականում համոզիչ կովաններ:

Տառացույց բառերի համեմատական վերլուծությունը մի լրացուցիչ միջոց է հիշյալ գործերի «հեղինակային իրավունքը» հաստատելու կամ կասկածի տակ դնելու ճանապարհին:

«Տաղ աւետեաց Աստուածածնին....»-ի և այբբենակապ մյուս ստեղծագործությունների տառացույց բառերի համեմատական վերլուծությունը

Համեմատության եզր ենք դարձրել «Տաղ աւետեաց Աստուածածնին, ի տէր Ներսիսէ Հայոց կաթողիկոսէ» ստեղծագործությունը (այսուհետև՝ «Տաղ աւետեաց....»), որի առաջին տողն է՝ «Այսար երեւի անտեսն ի բարձանց», տառացույց բառը՝ **այսար**:

Այս բառով է սկսվում այբբենակապ ընդամենը երկու տաղ. «**Այսար** անճառ Լուսոյն ծագումն» («Երգ տեսոն Ներսիսի Հայոց կաթողիկոսի ասացեալ յաղագս մեծի ուրբաթու գիշերին»), այսուհետև՝ «Երգ յաղագս մեծի ուրբաթու գիշերին»), «**Այսար** Մայր Սիոն ցընձայ տանելով» («Տաղ

համարէն սուրբ հայրապետացն ի Ներսէս կաթողիկոսէ հայոց», այսուհետև՝ «Տաղ համարէն սուրբ հայրապետացն....»):

Քննարկվող տաղի երկրորդ տողը՝ «**Բանին** բընութեամբ բոլոր եղականք», տառացույց բառը՝ **բան**: Սրանով սկսվում է ինը տաղ, ընդ որում դրանցից մեկը թեականներից է. «**Բանն** անմարմին անտեսութեամբ» («Գովասանութիւն գրոյն այբութենի») (այսուհետև՝ «Գովասանութիւն...»):

Նկատելի է, որ **բան**-ը գործածվել է քերականական տարբեր ձևերով՝ ուղղականով՝ «**Բանն**, որ ի ծոց Հաւր ծընեալն անմարմին» («Տաղ ծննդեան տեառն Ներսիսի կաթողիկոսի», այսուհետև՝ «Տաղ ծննդեան...»), «**Բան** քեզ ի հաճոյս» («Նորին տեառն Ներսիսի հայոց կաթողիկոսի՝ երգ աղաթական ի դէմս սրբոյ երրորդութեան, նաեւ իւրաքանչիւրոյ դիմի երրորդութեանն առանձնակի», այսուհետև՝ «Առաւօտ լուսոյ», ըստ առաջին տողի), **դ** հոդով՝ «**Բանդ**, որ ի ծոց Հաւր Միածին» («Երգ տեառն Ներսիսի ասացեալ առ ի Քրիստոս վասն ննջեցելոց», այսուհետև՝ «Երգ վասն ննջեցելոց»), «**Բանդ** ի Հաւրէ անճառ ծընունդ» («Տեառն Ներսիսի ասացեալ բան մաղթանաց», այսուհետև՝ «Բան մաղթանաց»), տրականով՝ «**Բանին** Հաւր փառաց» («Երգ յաղագս մեծի ուրբաթու գիշերին»), «**Բանին** Հաւր բանի» («Տաղ Յովհաննու Մկրտչին, ի Ներսիսէ Կաթողիկոսէ», այսուհետև՝ «Տաղ Յովհաննու Մկրտչին...»), գործիականով՝ «**Բանի** յանէից զերկրորդ» («Տաղ սրբոց հրեշտակապետացն, ի Ներսիսէ կաթողիկոսէ», այսուհետև՝ «Տաղ սրբոց հրեշտակապետացն...»), «**Բանի** պատմողք» («Տաղ սրբոց մարգարէիցն, ի Ներսիսէ կաթողիկոսէ», այսուհետև՝ «Տաղ սրբոց մարգարէիցն...»):

Տաղի երրորդ տողն է՝ «**Գովեն** գունդք վեհից վերին պետութեանց», տառացույց բառը՝ **գովել**: Անցյալ դերբայի ձևով գործածվել է երկու անգամ՝ «**Գովեալ** Հոգիդ Սուրբ Աստուծոյ» («Բան մաղթանաց»), «**Գովեալ** Վասիլ իշխանն առոյգ» («Անդրադարձութիւն տառից յիշատակարանի», այսուհետև՝ «Անդրադարձութիւն...»):

Չորրորդ տողը՝ «**Դարձեալ** կերպանայ ըզմերս ի Կուսէն», տառացույց բառը՝ **դարձեալ**: Հենց նույն ձևով այբբենակապ այլ գործերում հանդիպում է երկու անգամ՝ «**Դարձեալ** ասեմք ըստ անառակին» («Երգք ճաշու ժամուց») (Գրիգորեան, 2016, էջ 124), «**Դարձեալ** եղբարց երկուց ծընունդ» («Անդրադարձութիւն...»):

Համեմատության եզր դարձած տաղի 5-րդ և 6-րդ տողերի տառացույց բառերը (**եղանիմ**, **զարգանամ**) այլուր չեն հանդիպում: Եվ սա բնական է. մենք ամենևին հակված չենք կարծելու, թե տառացույց բառերի որոշակի չափով ընդհանրությունը պարտադիր պայման է:

Ընդհակառակը՝ չենք մոռանում, որ գործ ունենք մեծատաղանդ ստեղծագործողի հետ, և տառացույց բառերի չկրկնվելը ստեղծագործողի ինքնատիպության և ստեղծագործական անկաշկանդության դրսևորում պիտի համարել:

Յոթերորդ տողում պատկերը փոքր-ինչ այլ է. տառացույց միավորը **երևալ** բայի հնչյունափոխված տարբերակն է՝ «**Էրեւի** ծաղիկ նոր շառափղին»: Հեղինակն այդպես է վարվել հասկանալի պատճառով. **է**-ով սկսվող բառերը խիստ սակավ են (օրինակ՝ **Է / է, էշ, էջ**): Երկու տաղում գործածվել են նույն **երևալ** բայի դիմավոր և անդեմ ձևերը՝ «**Էրեւեցար** մարմնով յերկրի» («Երգ վասն ննջեցելոց»), «**Էրեւեալ** սըրբոցն ի հանդիսի ճրգանց» («Տաղ համարէն մարտիրոսաց, Տեառն Ներսէսի», այսուհետև՝ «Տաղ համարէն մարտիրոսաց....»), իսկ մի տաղում էլ **երեւումն** բայանուն գոյականի հնչյունական-ուղղագրական տարբերակը՝ «**Էրեւմամբ** Գաբրիէին» («Տաղ Յովհաննու Մկրտչին....»): Անկարևոր չենք համարում այն փաստը, որ մի տաղում ձևափոխված այս բայը տողի երկրորդ միավորն է՝ «**Էնն էրեւեցալ**» («Տաղ մեծի ուրբաթին»):

Հարկ է նկատել, որ կանոնական **է**-ով սկսվողները Շնորհալու այբբենակապ բանաստեղծություններում շատ չեն. տառացույց բառ են դարձել **էական** ածականն ու **Էմմանուէլ** հատուկ անունը, մնացածը **ե**-ով սկսվող բառերի ձևափոխումներ են (**էլեր < ելեր, էղեալ < եղեալ, էրրորդ < երրորդ, էրկոտասանք < երկոտասանք, Էրանուհոյ < Երանուհոյ** և այլն): Համանման պատկեր է ուրիշ հեղինակների այբբենակապ բանաստեղծություններում (նախքան Շնորհալին և Շնորհալուց հետո):

Տաղի ութերորդ տողն է՝ «**Ընդ** այն յայտնափոխ փոխարկեալ մարդոյն», տառացույց բառը **ընդ** նախդիրն է, որը հանդիպում է ևս տասնմեկ այբբենակապ ստեղծագործության մեջ: Ահավասիկ. «**Ընդ** բաղարջին հաց անխըմոր» («Երգ յաղագս մեծի ուրբաթու գիշերին»), «**Ընդ** ծառոց» («Երգ տեառն Ներսիսի առաջնոյ աւուր միաշաբաթին, եւ ի խորհուրդ արարչութեանն, եւ ի յարութիւնն Քրիստոսի», այսուհետև՝ «Երգ տեառն Ներսիսի առաջնոյ աւուր միաշաբաթին....»), «**Ընդ** աւագակին» («Երգք ճաշու ժամուց»), «**Ընդ** հրեշտակացն իննեակ դասին» («Նորին թուղթ մխիթարութեան առ ոմն իշխան արեւելեան վասն որդւոյ իւրոյ տարաժամ մեռելոյ», այսուհետև՝ «Նորին թուղթ մխիթարութեան....»), «**Ընդ** հրեշտակապետսն եւ հրեշտակացն բազմութիւնք» («Տաղ սրբոց հրեշտակապետացն....»), «**Ընդ** իննեակ պարուց աստ պարագայից» («Տաղ համարէն սուրբ հայրապետացն....»), «**Ընդ** մեզ Աստուած շըրջեցաւ մարմնով» («Տաղ ծննդեան....»), «**Ընդ** նեղ մըտէք դուռն անձուկ ճանապարհաւն» («Տաղ Անտոնի, տեառն Ներսիսի ասացեալ», այսուհետև՝ «Տաղ Անտոնի....»), «**Ընդ** քեզ խաւսի զայս բան խըրատ»

(«Տեանն Ներսիսի, խրատ ուսումնականաց մանկանց, ի դիմաց այբեւբենից տառից, ուսանաւոր տաղի չափոյ», այսուհետն՝ «Խրատ ուսումնականաց մանկանց»):

Երկուսը երբևէ թեական դիտված գործերն են՝ «**Ընդ** Աստուծոյ միայն եւեթըլ» («Գովասանութիւն...»), «**Ընդ** մարմնոյն խառնեալ եւ միացեալ լինի» («Տաղ ծննդեան ճրագալուցին, ի տէր Ներսէս կաթողիկոսէ», այսուհետն՝ «Տաղ ծննդեան ճրագալուցին...»):

Իններորդ տողը՝ «**Թէ՛նդ** այդ յանցանացդ, որ ի պատրողէն», տառացոյց բառը **թէ** շաղկապն է, որ ուրիշ տեղում հանդիպում է միայն երկու անգամ՝ «**Թէ** միտ դընես, ասէ, բանին» («Խրատ ուսումնականաց մանկանց»), «**Թէ** զամենայն ունիս յանձին» («Նորին խրատք ոգեշահք»): **Թէ**-ի պարագայում հարկ է արձանագրել, որ գործածության երեք դեպքերից երկուսը թեականներում է, սակայն այս իրողությունը վճռական դեր չի կարող ունենալ:

Թ-ի պարագայում ուզում ենք հատուկ շեշտել, որ «Տաղ ծննդեան ճրագալուցին ...» ստեղծագործության 9-րդ տողի տառացոյց բառը **թագաւոր**-ն է. «**Թագաւորն** երկնի յերկրի երեւեսցի», և այդ բառով են սկսվում ևս 13 այբբենակապ ստեղծագործությունների համապատասխան տողերը: Այսպես. «**Թագաւորն** արարածոց» («Երգ յաղագս մեծի ուրբաթու գիշերին»), «**Թագաւորին** երկնից զինուոր» («Երգ տեառն Ներսիսի առաջնոյ աւուր միաշաբաթին...»), «**Թագաւոր** թագաւորաց» («Երգք ճաշու ժամուց»), «**Թագաւորըդ** հրեղինաց» («Երգ վասն ննջեցելոց»), «**Թագաւորք** յաւետք եւ քահանայք մըշտանըւէրք» («Տաղ սրբոց հրեշտակապետացն...»), «**Թագաւորըք** գումարեալք» («Տաղ առաքելոցն, ի Ներսիսէ կաթողիկոսէ», այսուհետն՝ «Տաղ առաքելոցն...»), «**Թագաւորաց** ամոռն իւղով» («Տաղ սրբոց մարգարէիցն...»), «**Թագաւորն** երկնից փոխան իւր կարգեաց» («Տաղ համարէն սուրբ հայրապետացն...»), «**Թագաւորն** անմահ ի յաշխարհէ մահու» («Տաղ համարէն մարտիրոսաց...»), «**Թագաւոր** փառաց՝ ծառայի կերպի» («Տաղ ծննդեան...»), «**Թագաւորին** Քրիստոսի զինուորք արիք» («Տաղ Անտոնի...»), «**Թագաւորացն** ընդ Քեզ յերկինս» («Բան մաղթանաց»), «**Թագաւոր** փառաց» («Առաւօտ լուսոյ»): Այս կարգի ընդհանրությունը բավական լուրջ կռվան կարող է դառնալ այս ստեղծագործության հեղինակային պատկանելության որոշման հարցում:

«Տաղ աւետեաց...» տաղի 10-րդ տողն է «**Ժամանակ** եհաս Կուսին աւետեաց», տառացոյց բառը՝ **ժամանակ**, որը Շնորհալին ուրիշ տաղում գործածել է միայն երկու անգամ. «**Ժամանակ** եհաս փրկութեան մարդկան» («Տաղ ծննդեան...»), «Ժամանակի պարունակող» («Բան հաւատոյ վասն անեղին եւ եղելոց բարառնաբար, ի դիմաց հայկական

տառից, չափաբերմամբ ոգեալ ի Ներսիսէ», այսուհետև՝ «Բան հաւատոյ...»): Երկու անգամ էլ պատահում է նույնահիմք **ժամանակեայ** բառը՝ «**ժամանակեայ** գկենցաղըս յոյժ» («Նորին յիշատակարան առակաց Սողոմոնի», այսուհետև՝ («Նորին յիշատակարան...»)), «**ժամանակեայ** գկեանքս անցաւոր» («Տեառն Ներսիսի, բան ներտաղական, ի խրատ ոգւոց համայնից, ի դիմաց մերոյին, տառից տանց յիրաքանչիւրսն քառից», այսուհետև՝ «Բան ներտաղական»):

Բայց ահա «Տաղ ծննդեան ճրագալուցին...»-ի **ժ**-ով սկսվող տողն է «**ժառանգ** աւետեաց Աբրահամուն զարմի»: **ժառանգ** բառով են սկսվում հինգ այլ տաղեր ևս. «**ժառանգին** Հաւր ըսպասաւոր» («Երգ տեառն Ներսիսի առաջնոյ աւուր միաշաբաթին...»), «**ժառանգ** Վերինըն Սիոնին» («Նորին թուղթ...»), «**ժառանգ** եղև նոր արինաց» («Տաղ սրբոց մարգարէիցն...»), «**ժառանգս** աթոռոց զքահանայապետս» («Տաղ համարէն սուրբ հայրապետացն...»), «**ժ[առան]գ** առնէ բարեացն անվա՞րժ» («Գովասանութիւն...»): Վերջինս կասկածելի համարվածներից է:

Երկու դեպքում գործածվել են նույնարմատ **ժառանգորդ** և **ժառանգող** բառերը՝ «**ժառանգորդք** երկնից արքայութեանն ի սկըզբանէ» («Տաղ սրբոց հրեշտակապետացն...»), «**ժառանգողացն** ըզկեանսդ անճառ» («Բան մաղթանաց»):

«Տաղ աւետեաց...»-ի 11-րդ տողն է «**Ի** յորովայնէ նըւաստ երեւեալ», տառացույց միավորը **ի** նախդիրն է, որն այլուր գործածվել է 14 անգամ: Այսպես. «**Ի** Հաւրէ լոյս ծագեցար» («Երգ տեառն Ներսիսի առաջնոյ աւուր միաշաբաթին...»), «**Ի** Հաւրէն Լուսոյ լոյս գիտութեան միշտ ընկալեալք» («Տաղ սրբոց հրեշտակապետացն...»), «**Ի** յընտրելոց աշակերտացն» («Երգ յաղագս մեծի ուրբաթու գիշերին»), «**Ի** հրոյ լեզուս երեւեցար» («Երգք ճաշու ժամուց»), «**Ի** փրկութեան մերոյ սկըզբան» («Երգ վասն ննջեցելոց»), «**Ի** գիրկըս Հաւրն է գըզուելին» («Նորին թուղթ մխիթարութեան...»), «**Ի** Սաղիմ քաղաք վեհին» («Տաղ առաքելոցն...»), «**Ի** Հոգւոյն Սըրբոյ լըցեալք գիտութեամբ» («Տաղ համարէն սուրբ հայրապետացն...»), «**Ի** բերանոյն բարբառելով» («Տաղ Յովհաննու Մկրտչին...»), «**Ի** ժամանակ յոյժ անբարի» («Անդրադարձութիւն...»), «**Ի** յերկրի ճըզնեալ չարչարանաք մարմնոյ» («Տաղ համարէն մարտիրոսաց...»), «**Ի** յերկրի աղ անհամից նեխելոց մեղաք» («Տաղ Անտոնի...»), «**Ի** գիրկըս Կուսին Աստուած տըղայ բազմի» («Տաղ ծննդեան ճրագալուցին...»), «**Ի** հրեղինաց դասըն խ[ա]ռնի» («Գովասանութիւն...»): Վերջին երկու տողը խնդրահարուց դիտված ստեղծագործություններից են:

Ի-ն ձևային առումով ակներև է: Հարկ է նաև նկատի ունենալ, թե տառացույց միավորը ի՞նչ կառույցներում է հանդես գալիս (բացառական հոլովածն, ներգոյականի իմաստով նախդրային կառույցներ և այլն), գործածության յուրահատկություններ (օրինակ՝ կրկնանախդիր **ի յերկրի**-ն երկու անգամ)

Տաղի 12-րդ տողը՝ «**Լընու** զամենայն զոր յառաջն ասաց», տառացույց բառը **լնուլ** բայն է: Այլուր խոնարհված երկու ձևեր են գործածվել միայն. «**Լըցար** Հոգուվ Սուրբ անդրստին» («Տաղ Յովհաննու Մկրտչին...»), «**Լըցի** զըղծումն իմ անծկացեալ» («Անդրադարձութիւն...»):

Հաջորդ՝ 13-րդ տողի տառացույց բառը **խաղայր**-ն է, որը եզակի է:

Իսկ ահա «Տաղ ծննդեան ճրագալուցին...»-ի **խ** տառով սկսվող տողի («**խորհուրդն** ծածկեալ այսար ծնընդեամբ յայտնեալ») տառացույց բառը հանդիպում է երկու ուրիշ տաղերում՝ «**խորհրդոցն** աստուածայնոց» («Տաղ առաքելոցն...»), «**խորհրդով** ծանեան ըզխորս Աստուծոյ» («Տաղ համարէն սուրբ հայրապետացն...»):

«Տաղ աւետեաց...»-ի 14-րդ տողը՝ «**Ծանուցող** եղեալ Կուսին աւետեաց», տառացույց բառաձևը՝ **ծանուցող** (կազմվել է անկանոն կամ զարտուղի խոնարհում ունեցող **ճանաչել** (< ***ճանաչել**. արմատն է **ճան**) բայի անցյալ կատարյալի հիմքից (Աճառյան, 1973, էջ 443, Աբրահամյան, 1976, էջ 191-192)), հմմտ. **ծանուցանել**, **ծանուցիչ**, **ծանուցումն** (Աւետիքեան, Սիրմէլեան, Ազերեան, 1836, էջ 1007): Գործածվել են նշյալ բայի սահմանական և հրամայական եղանակների և անցյալ դերբայի հինգ ձևեր՝ «**Ծանոյց** թէ Լոյսն արարչական» («Երգք ճաշու ժամուց»), «**Ծանուցին** բանիւ բանաւոր հաստից» («Տաղ համարէն սուրբ հայրապետացն...»), «**Ծանեաւ** Ադամ զն(ը)շան» («Տաղ մեծի ուրբաթին»), «**Ծանի՛ր** զբնութիւնըս մեր մարմնով» («Նորին թուղթ...»), «**Ծանուցեալ** տայ սա զԱստուած» («Գովասանութիւն...»): Մեր ուշադրությունը կրկին սևեռենք այս վերջինի վրա:

Տաղի 15-րդ տողն է «**Կենաց** ես յայտնող, կոյս եւ անարատ», տառացույց բառը՝ **կեանք** գոյականի սեռական հոլովածն: Ուրիշ ստեղծագործություններում գործածվել է բառի ուղիղ և թեք մեկական ձև՝ «**Կեանք** ի կենաց, լոյս ի լուսոյ» («Երգ վասն ննջեցելոց»), «**Կենացըն** հացի քաղցելոց բաշխողք» («Տաղ համարէն սուրբ հայրապետացն...»), երկու անգամ՝ նույնահիմք **կենարար** բարդ բառը:

Տաղի 16-րդ տողը՝ «**Հոգի** Աստուծոյ ի քեզ եկեսցէ», տառացույց բառը՝ **հոգի**: Հանդիպում է երկու անգամ. հոգնակի ուղղականը՝ «**Հոգիք** հարկաւորք՝ վեհին կամացըն սպասաւորք» («Տաղ սրբոց հրեշտակապետացն...»), և եզակի գործիականը՝ «**Հոգուվ** լըցեր զմարդն առաջին» («Երգ վասն ննջեցելոց»):

Հաջորդ՝ 17-րդ տողն է **«Ձայն** Տեառն զարուօթեանց ի քեզ որոտայ», տառացույց բառը՝ **ձայն**: **Ձ** տառով բառ փնտրելիս Շնորհալին հաճախ է դիմել այս բառին: Նա գործածել է բառի ուղիղ ձևը՝ **«Ձայն** բարբառոյ յանապատէ» («Տաղ Յովհաննու Մկրտչին...»), նաև **ն** հոդով՝ **«Ձայնըն** հաւուն յոյժ գերապանձ» (գերապանձ-ը **ձ**-ով է գրվել հակադարձ վերջադիր ծայրակապ-այբբենակապի թելադրանքով հաջորդում է **ահ**-ին) («Նորին յիշատակարան...»), թեք հոլովածևը՝ **«Ձայնի** սուրբ փեսային գալոյ սպասողք» («Տաղ Անտոնի...»): Ուշագրավ է, որ վեց անգամ գործածվել է գործիական հոլովածևը՝ **ձայնի**: **«Ձայնի** մաղթեր» («Երգ յաղագս մեծի ուրբաթու գիշերին»), **«Ձայնի** առ Քեզ, Տէր, պաղատիմք» («Երգ տեառն Ներսիսի առաջնոյ ատուր միաշաբաթին...»), **«Ձայնի** պատմողն Եգեկիէլ» («Տաղ սրբոց մարգարէիցն...»), **«Ձայնի** կոչեցին առ ի ճաշակել» («Տաղ համարէն սուրբ հայրապետացն...»), **«Ձայնի** ցընծութեամբ ներպարտեալ խընդամք» («Տաղ ծննդեան ճրագալուցին...»), գործիականը նաև հոդով՝ **«Ձայնիս** աղաչեմ» («Առաւօտ լուսոյ»): Նախավերջին օրինակը քննարկվող չորս տաղերից մեկից է:

Գործածվել են նաև նույնարմատ **ձայնել** բայը՝ **«Ձայնեցեր** առ Ղազարոս» («Երգք ճաշու ժամուց»), **«Ձայնեցէք** առ յիմարեալրս» («Տաղ առաքելոցն...»), մեկ անգամ՝ **ձայնակից**-ը՝ **«Ձայնակից** եղեն վերին զըւարթնոցն» («Տաղ ծննդեան...»):

Ուշագրավ է տաղի 18-րդ տողը՝ **«Ղաւղեալ** սուրբ կուսին յահէ հրեշտակին», տառացույց բառը՝ **ղաւղեալ** (< **ղաւղել** / **ղօղել** «թաքցնել, ծածկել, փակել, պահել»): Ուրիշ գործերում յոթ անգամ այս նույն ձևն է գործածվել՝ **«Ղաւղեալ** յերկիր» («Երգ յաղագս մեծի ուրբաթու գիշերին»), **«Ղաւղեալ** յոգւոց մեր հերքեսցի» («Երգք ճաշու ժամուց»), **«Ղաւղեալ** սարսեաց պահակ մահու» («Երգ վասն ննջեցելոց»), **«Ղաւղեալ** խորհուրդ բացայայտէ» («Տաղ սրբոց մարգարէիցն...»), **«Ղաւղեալ** սարսեն դըստերքն ի խաղ» («Նորին յիշատակարան...»), **«Ղաւղեալ** խորհուրդ, ասէ, թաքուն» («Բան հաւատոյ...»), **«Ղաւղեալ** հոգւոջ ծածկեա՛ զբարին» («Նորին խրատք ոգեշահք»): Սա պատահականություն չի կարող լինել, այլ, մեր կարծիքով լեզվամտածողության դրսևորում է, այս կամ այն բառին նախապատվություն տալու դրսևորում:

Միայն մեկ անգամ **ղաւղել** բայի դիմավոր ձև է գործածվել՝ անցյալ կատարյալը. **«Ղաւղեաց** յաշխարհէ մէզ տըգիտութեան» («Տաղ համարէն սուրբ հայրապետացն...»):

«Տաղ ծննդեան ճրագալուցին...» **ղ**-ով տողն է **«Ղամբար** լուսափայլ մեք հաւատով վառեալ», տառացույց բառը՝ **ղամբար** «ջահ,

լույս, կանթեղ, ճրագ»: Բառը քանիցս հանդիպում է տառացույց բառի դերում. «**Ղամբար** մանկանց ողջակիզով» («Նորին թուղթ մխիթարութեան...»), «**Ղամբար** լուսափայլ յայտնեալ ի յայրին» («Տաղ ծննդեան...»), «**Ղամբար** լուսոյ մըտաց նուաղ» («Անդրադարձութիւն...»), «**Ղամբարք** լուսափայլ վառեալք ի տիպ ըզգայական» («Տաղ սրբոց հրեշտակապետացն...»):

Ի դեպ, երկու անգամ գործածվել է նույնարմատ **ղամբարումն** բայանուն գոյականը. «**Ղամբարմամբ** լուսոյ բանին» («Տաղ առաքելոցն...»), «**Ղամբարմամբ** լուսոյ ի յառագաստ մըտին» («Տաղ համարէն մարտիրոսաց...»), մեկ անգամ՝ **ղամբարափայլ**-ը. «**Ղամբարափայլ** լապտերաք հաւատոյ» («Տաղ Անտոնի...»):

Առավել հետաքրքրական է, որ եռյակ ծայրակապով մի ստեղծագործության մեջ զուգադրվել են **ղաւղեալ**-ը և **ղամբար**-ը.

Ղեղի դառնութեան,

Ղաւղեալ ի սիրտ իմ,

Ղամբար իմ շիջաւ («Տեառն Ներսիսի հայոց կաթողիկոսի՝ ողբերգութիւն անձին զղջացելոյ եւ բողոք իւրաքանչիւրոյ դիմի խոստովանաբար», այսուհետև՝ «Ողբերգութիւն անձին զղջացելոյ»):

Ուշագրավ է նաև բնագրային այս նմուշը, որտեղ զուգադրվել են **ղամբարումն**-ը և **ղաւղեալ**-ը.

Ղամբարմամբ լուսոյ,

Ղեկավար ճարտար,

Ղաւղեալս ամրացո՛ («Առաւօտ լուսոյ»):

Այսպիսի բառընտրությունը հուշում է, որ **ղաւղեալ**-ը և **ղամբար**-ը Շնորհալու բառապաշարի միավորներից են:

«Տաղ աւետեաց...»-ի 19-րդ տողի տառացույց բառը **ճեպեմ**-ն է, որ եզակի է: Պատկերն էապես չի տարբերվում մյուս տաղերում: **Ճ**-ի հարցում պատկերն առհասարակ բավական խայտաբղետ է. նույնական կամ նույնահիմք բառերի կրկնություն գրեթե չի նկատվում:

Քիչ թե շատ տարբեր է «Գովասանութիւն...» տաղի պարագան: Այս տաղի տասնիններորդ տողի («**Ճշմարտապէս** առնել զըարճ») տառացույց բառը **ճշմարտապէս**-ն է, որն ուրիշ տեղում գործածվել է միայն մեկ անգամ՝ «**Ճըշմարտապէս** խաչելութեամբդ» («Բան մաղթանաց»): Մյուս տաղերում երեք անգամ գործածվել է բառակազմական նույն փնջի ելակետային ձևը՝ **ճշմարիտ**-ը, մեկական անգամ՝ **ճշմարտութիւն**-ը և **ճշմարտահաւատ**-ը:

Հարկ է արձանագրել, որ **ճ**-ից սկսած՝ այս և մյուս տաղերի տառացույց բառերի զուգահիպումները երբեմն էապես նվազում են կամ էլ ուղղակի չկան:

«Տաղ աւետեաց...»-ի 20-րդ տողի **միայն**-ը ևս եզակի է: «Տաղ ծննդեան ճրագալուցին...»-ի քսաներորդ տողի տառացույց բառը **մաքուր**-ն է («**Մաքուր** սրբութեամբ պատրաստեցէք ըզձեզ»), որը էլի գործածվել է՝ «Մաքուր մատի՛ք» («Տաղ մեծի ուրբաթին»), իսկ «Գովասանութիւն...»-ում նույնարմատ **մաքել**-ն է՝ «**Մաք[րէ]** շ[նո]րհաւք զախտըս բազում»:

«Տաղ աւետեաց...»-ի 21-րդ տողի (**Յառնէ** երկրածնէ ոչ իցեմ խաբեալ) տառացույց բառը նույնպէս չկրկնվող է:

Համեմատվող մյուս երկու ստեղծագործություններում պատկերն այլ է: «Տաղ ծննդեան ճրագալուցին...» և «Գովասանութիւն...» գործերի 21-րդ տողերի առաջին բառամիավորները նախդրավոր են. գործ ունենք ձայնավորից առաջ յ-ի վերածված **ի** նախդրի հետ. «**Յերկնից** խոնարհեալ անմարմնական զաւրացն» և «**Յառագաստին** ուր Փեսայն կայ»: Այդպէս է տասնյակից ավելի դեպքերում ևս, ինչպէս՝ «**Յանապատի** վայրաբնակեալ» («Տաղ Յովհաննու Մկրտչին...»), «**Յամենայն** ազանց ընծայեցայք պըտուդ» («Տաղ համարէն մարտիրոսաց...»), «**Յանմահ** աղբիւրէն ըզմեզ արբուցէք» («Տաղ համարէն սուրբ հայրապետացն...»), «**Յայրն** իջավանեալ տեսին զարեգակն» («Տաղ ծննդեան...») և այլն: Կան, իհարկէ, նաև ոչ նախդրային միավորներ՝ **յորդահոս**, **յիշել** և այլն:

«Տաղ ծննդեան ճրագալուցին...»-ի **ն**-ով սկսվող տողն է «**Նոր** երգ պար առեալ հրեշտակական երամբն», տառացույց բառը՝ **նոր**: Սա հանդիպում է ևս երեք անգամ՝ «**Նոր** հատին փոքու ցըրուեալ» («Երգ յաղագս մեծի ուրբաթու գիշերին»), «**Նոր** նորոգելով հոգով գիտութեամբ» («Տաղ համարէն սուրբ հայրապետացն...»), «**Նոր** Հեղիաս Հոգով լըցեալ» («Տաղ Յովհաննու Մկրտչին...»):

«Տաղ աւետեաց ...» տաղում տառացույց բառը նույնարմատ **նորասքանչ**-ն է՝ «**Նորասքանչ** է բանս, զոր ես լըսեցի», իսկ «Գովասանութիւն...»-ում՝ **նորոգել**-ը՝ «**Ն[ո]րոգելով** ըզմարդըն հին»: Սա ուրիշ տեղերում էլ է պատահում՝ «**Նորոգելով** ի հնութենէ» («Բան մաղթանաց»), **Նորոգողք** տիեզերաց («Երգ տեառն Ներսիսի առաջնոյ աւուր միաշաբաթին...»): Կա նաև ուղղակի **նորոգ**. «**Նորոգ**, ասէ, երիտասարդ» («Բան ներտաղական»): Նոր արմատով հանդիպում է նույնարմատ **նորակերտ** բառ ևս. «**Նորակերտ** քաղաքըն սուրբ» («Տաղ առաքելոցն...»), որ հիմք է տալիս եզրակացնելու, որ Շնորհալին **ն**-ն հաճախ զուգորդել է նորի գաղափարին:

Ասվածի լավագույն վկայությունը այս եռատողն է.

Նորոգող հնութեանց,

Նորոգեա՛ եւ զիս,

Նորոգ զարդարեա՛ («Առաւօտ լուսոյ»):

«Տաղ աւետեաց...»-ի 23-րդ տողի տառացույց բառը **շտապով**-ն է, այլուր չհանդիպող:

«Գովասանութիւն...»-ի 2-ով տողն է «**Շինաձ** առնէ սա նորահրաշ», տառացույց բառը՝ **շինել**, որի տարբեր ձևեր երեք անգամ հանդիպում են Շնորհալու այբբենակապ այլ բանաստեղծություններում՝ «**Շինէ** զքակեալս նորոգելով» («Նորին թուղթ մխիթարութեան...»), «**Շինող** էիցըս համայնից» («Երգ տեառն Ներսիսի առաջնոյ ատուր միաշաբաթին...»), «**Շինողք** աշտարակի արինացն ի կատարումն» («Տաղ Անտոնի...»):

«Տաղ ծննդեան ճրագալուցին...»-ի 2-ով տողն է «**Շնորհաւք** սուրբ Կուսին եւ կուսածին փրկչին», տառացույց բառը՝ **շնորհ**: Մյուս տաղերում քանիցս գործածվել են **շնորհել**, **շնորհատու**:

«Տաղ աւետեաց...»-ի 24-րդ տողն է «**Ուստի** այս լիցի,- զայն պատասխանէր», տառացույց բառը՝ **ուստի**, որը Շնորհալին միայն մեկ անգամ էլ գործածել է «Տաղ մեծի ուրբաթին»-ում՝ «**Ուստի** ունիմք»:

«Տաղ ծննդեան ճրագալուցին...»-ի **ո**-ի տողի («**Ուրախ** ցրնծութեամբ զնաակատիս տաւիս») տառացույց բառը նույնպես հազվադեպ է. «**Ուրախ** արարէք զքաղաքս Աստուծոյ» («Տաղ համարէն սուրբ հայրապետացն...»): Իհարկե, կան նաև նույն արմատից բաղադրված **ուրախանալ**-ը. «**Ուրախացաւ** զնացիք գետոց» («Երգ տեառն Ներսիսի առաջնոյ ատուր միաշաբաթին...») և **ուրախութիւն**-ը. «**Ուրախութեամբ** զարք երկնայինք» («Երգ վասն ննջեցելոց»):

Քանի որ «Տաղ ծննդեան ճրագալուցին...»-ը սահմանափակվում է **ո** տառով, ուստի համեմատությունն այսուհետև կկատարվի մյուս տաղերի միջոցով:

«Տաղ աւետեաց...»-ի 25-րդ տողում գործածվել է **չ** մասնիկով բայածն՝ «**Չունիմ** ինչ կարծիս, հրեշտակ Աստուծոյ»: Սկզբունքորեն նույն մոտեցումով երեք տաղերում գործածվել է **չէ**-ն՝ «**Չէ** պիտանի արծաթըն յինչ» («Նորին յիշատակարան...»), «**Չէ** նախանձոտ սա ուսուցիչ» («Անդրադարձութիւն...»), «**Չէ** իմաստուն, որ զայս առնէ» («Նորին խրատք ոգեշահք»):

Իսկ «Գովասանութիւն...» 5-ով սկսվող տողում («**Չընաշխարհիկ** է զարդարիչ») առաջինը **չնաշխարհիկ** բառն է, որն ուրիշ տաղերում հանդիպում է երկու անգամ՝ «**Չընաշխարհիկ** մարդկան ցուցար» («Տաղ Յովհաննու Մկրտչին...»), «**Չընաշխարհիկ** մարմինըս նոր» («Տաղ մեծի ուրբաթին»):

Հետաքրքրական է **պ** տառով սկսվող բառերի ընտրությունը: Կրկնակի գործածություն ունի միայն **պապանձեալ**-ը, մնացածը բոլորովին տարբեր բառեր են: «Տաղ աւետեաց...»-ի 26-րդ տողում

պանծալի-ն է: Թվարկենք այլ բառեր ևս՝ **պայծառացեալ, պատան, պատճառ, պատուական, պարագլուխք, պսակ** և այլն:

«Տաղ աւետեաց...»-ի 27-րդ տողն է «**Ջահին** մեծ արփույն ընդունակ եղեր», տառացոյց բառը՝**ջահ**: Այլուր այս բառը տեսնում ենք երեք անգամ՝ «**Ջահըն** Լուսոյ յառաւատին» («Երգ յաղագս մեծի ուրբաթու գիշերին»), «**Ջահըն** Լուսոյ յերկնից ծագեալ» («Տաղ Յովհաննու Մկրտչին...»), «**Ջահըղ** Լուսոյ մեծապայծառ» («Երգք ճաշու ժամուց»): Գործածվել է նաև նույնարմատ **ջահաւորեալ** բառը. «**Ջահաւորեալ** նըշան Խաչին» («Երգ վասն ննջեցելոց»):

«Տաղ աւետեաց...»-ի 28-րդ տողն է «**Ռահ** ուղղեալ յերկնից բերեմ զաւետիս», տառացոյց բառը՝ **ռահ**: Այս տառով սկսվող բառերի մեջ **ռահ**-ը գերակշռում է. գործածվել է ուղիղ և թեք հոլովաձևերով, եզակի և հոգնակի թվերով, 12 անգամ: Այսպես՝ «**Ռահ** գործեալ երկնաւորաց» («Երգ վասն ննջեցելոց»), «**Ռահ** գործեալ երկնից իջանէին ընդ Միաձնին» («Տաղ սրբոց հրեշտակապետացն...»), «**Ռահ** գործէր ի յաւրինացն» («Տաղ սրբոց մարգարէիցն...»), «**Ռահ** գործեալ ի Յորդանան» («Տաղ Յովհաննու Մկրտչին...»), «**Ռահ** հորդեալ յերկինս որդւոց Ադամայ» («Տաղ ծննդեան...»), «**Ռահ** լուսոյ յերկինս» («Տաղ մեծի ուրբաթին»), «**Ռահ** ցոյց ինձ լուսոյ» («Առաւօտ լուսոյ»), «**Ռահիւ** լուսոյ պատուիրանին» («Երգ տեառն Ներսիսի առաջնոյ աւուր միաշաբաթին...»), «**Ռահիւք** ի յերկինս առաջնորդեցէք» («Տաղ համարէն սուրբ հայրապետացն...»), «**Ռահիւք** յաշխարհէ հալածանաւքն ըզձեզ» («Տաղ համարէն մարտիրոսաց...»), «**Ռահիւք** լուսոյ ի յերկինս ելէք» («Տաղ Անտոնի...»): «Գովասանութիւն...» բանաստեղծութեան մեջ նույնպես տառացոյց բառը **ռահ**-ն է՝ «**Ռահին** կենաց սուրբ եւ անճառ»:

«Տաղ աւետեաց...»-ի 29-րդ տողի առաջին բառը **սպասաւորել**-ն է՝ «**Սպասաւորեմ** ես սուրբ թագաւորին», որը եզակի է: Բայց այդ տողում գործածված **Սուրբ**-ը և նրանից կազմված **սրբել**-ը տեսնում ենք այլ տեղերում: Այսպես՝ **Սուրբ**. «**Սուրբ** տըղային ո՛չ լալոյ ձայն» («Նորին թուղթ մխիթարութեան...»), «**Սուրբըն** Գաբրիէլ նախ աւետէր Մարիամու» («Տաղ սրբոց հրեշտակապետացն...»), «**Սուրբ** Հոգւոյն տաճարք մաքրեալք» («Տաղ առաքելոցն...»), «**Սըրբոցս** քոց ընտրելոցս, Յիսո՛ւս, մաղթանաւք» («Տաղ Անտոնի...»), **սրբել**. «**Սրբել** զհոգիս յախտից յայժմուս» («Գովասանութիւն...»), **Սըրբելով** զոգիս սուրբ աւագանան («Տաղ համարէն սուրբ հայրապետացն...»):

«Տաղ աւետեաց...»-ի 30-րդ տողն է «**Վերուստ** եմ իջեալ տալով զաւետիս», որի տառացոյց բառը այլուր չի կրկնվում, սակայն **վեր** բաղադրիչով կազմութիւններ կան: Այսպես. **վերելք**. «**Վերելս** ի սըրտի

դընել ընդ սոսա տո՛ւր մեզ» («Տաղ Անտոնի»), **վերին**. «**Վերնոց** ահաւորն խոնարհի մարդկան» («Տաղ ծննդեան....»):

«Տաղ աւետեաց....»-ի 31-րդ տողի առաջին բառը **տալ**-ն է («**Տալով** զաւետիս, որ ոչ անցանէ»), չկրկնվող:

«Գովասանութիւն»-ի տառացույց բառը **տուն**-ն է՝ «**Տան** Աստուծոյ տընտես հաստատ», որը նույն ձևով տեսնում ենք ևս երկու անգամ գործածված. «**Տանն** Աստուծոյ տընտեսք բարի» («Տաղ առաքելոցն....»), «**Տան** եկեղեցոյ տընտեսք իմաստունք» («Տաղ համարէն սուրբ հայրապետացն....»):

«Տաղ աւետեաց....»-ի 32-րդ տողն է «**Րաբունին** էից ի քէն ծընանի», տառացույց բառը՝ **րաբունի**: Հայերենում **ր**-ով բառեր ընտրելու հնարավորությունը չափազանց սահմանափակ է, ուստի բնական է, որ այս բառի քերականական տարբեր ձևերը բազմիցս տեսնում ենք նաև ուրիշ տաղերում. «**Րաբունոյն** ասանդեցեր» («Տաղ Յովհաննու Մկրտչին....»), «**Րաբունոյն** բարոյ» («Ողբերգութիւն անձին զղջացելոյ»), «**Րաբունք** հրմուտք վարդապետաց» («Տաղ առաքելոցն....»), «**Րաբունք** կատարեալք տղայոց ի Քրիստոս» («Տաղ համարէն սուրբ հայրապետացն....»), «**Րաբունից** րաբունն Հայր վրկայելով» («Տաղ ծննդեան....»), «**Րաբունեաց** մերոց ճանապարհաւ յերկինս» («Տաղ Անտոնի....»), «**Րաբունդ** երկնաւոր» («Առաւօտ լուսոյ»):

Կան նաև այս հիմքով կազմութիւններ **-բար** և **-ական** ածանցներով՝ **րաբունաբար**. «**Րաբունաբար** վարդապետիմք» («Երգ տեսան Ներսիսի առաջնոյ աւուր միաշաբաթին....»), «**Րաբունաբար** վարդապետէ» («Խրատ ուսումնականաց մանկանց»), **րաբունական**. «**Րաբունական** սիրոյն տիպար» («Նորին յիշատակարան....»): Ի դեպ, ԺԲ դարում Կարապետ վարդապետը որպէս տառացույց բառ գործածել է **րաբունաւրէն**-ը (Գրիգորեան, էջ 193):

«Տաղ աւետեաց....»-ի 33-րդ տողն է «**Յընծա՛**, դուստր անմեղ, Եայի ունկամբն», տառացույց բառը՝ **ցնծալ**: Եղանակաժամանակային և անդեմ տարբեր ձևեր գործածվել են ևս վեց ստեղծագործության մեջ՝ «**Յընծալ** բերկրիլ ընդ հրեշտակաց» («Նորին յիշատակարան....»), «**Յընծամ** հոգով մինչ կարդացից» («Անդրադարձութիւն....»), «**Յընծայ** այսաւր Եկեղեցի» («Տաղ Յովհաննու Մկրտչին....»), «**Յընծացա՛յ** բերկրեալ յուսով» («Բան մաղթանաց»), «**Յընծացուք** յիշատակաւ արդարոցս այսաւր» («Տաղ Անտոնի....»), «**Յընծասցէ** անձն իմ» («Առաւօտ լուսոյ»): Զարմանալի չէ նույնարմատ **ցնծութիւն** բառի գործածությունը. «**Յընծութեամբ** տային նոյնք աւետիս իւղաբերիցն» («Տաղ սրբոց հրեշտակապետացն....»):

«Տաղ աւետեաց...»-ի 34-րդ տողն է «**Իփթանիթ** մարմնով, լուծիչ տրրտմութեանց», որի առաջին բառը չի կրկնվում այլուր: Հայտնի է, որ **ւ** տառով սկսվող հայերեն որևէ բառ չունենք, ուստի բանաստեղծները այբբենակապ ստեղծագործություններումն ձևափոխում էին հայերեն բառերը, օրինակ՝ **հիծեալ** բառը գրում են **լիծեալ**՝ նկատի ունենալով **ւ** տառի անունը՝ **հյուն** (Շարաբխանյան, էջ 159-160):

«Գովասանութիւն...» բանաստեղծության «**Իփսել** [բանիս՞] [ա]յսըմ տառի» տողի տառացույց բառն է **լիսել**: Այսպես էլ՝ «**Իփսին** պըսակք զանազանեալ» («Երգ վասն ննջեցելոց»), «**Իփսէ** պըսակ զարմանալի» («Տաղ Յովհաննու Մկրտչին...»), «**Իփսեա** յոգոջ բարիս բազում» («Նորին խրատք ոգեշահք»), «**Իփսեալ** նորին վարուց մանկունքն» («Տաղ սրբոց մարգարէիցն...»): Հանդիպում է նաև բայանուն գոյականը՝ «**Իփսմամբ** լուսոյ այսար տանի» («Տաղ առաքելոցն...»), «**Իփսմամբ** փառաց պըսակելոց» («Բան մաղթանաց»):

«Տաղ աւետեաց...»-ի 35-րդ տողն է «**Փառաց** թագաւորն ի քէն մեզ յայտնեալ», տառացույց բառը՝ **փառք**, որի տարբեր ձևերը հանդիպում են ինը ուրիշ տաղերում: Այսպես. «**Փառք** են սոքա ազգի մարդկան» («Տաղ սրբոց մարգարէիցն...»), «**Փա՛ռքք** Քեզ, Յիսուս. Արարող այսըր հաշտութեան» («Տաղ սրբոց հրեշտակապետացն...»), «**Փա՛ռք** ամենայն առաքինեաց» («Տաղ Յովհաննու Մկրտչին...»), «**Փառաց**, միշտ էին փառաւորելոյն» («Տաղ ծննդեան...»), «**Փառաց** ի փառըս բարձրանան» («Երգ վասն ննջեցելոց»), «**Փառաց** անճառ լինի գուշակ» («Բան հաւատոյ...»), «**Փառացն** անճառից ընդ երջանիկ վըկայսն» («Տաղ համալրէն մարտիրոսաց...»), «**Փառաւք** փայլէ յարքայութեան» («Նորին թուղթ մխիթարութեան...»), «**Փառաւք** ըզձեզ պսակողին» («Տաղ առաքելոցն...»):

Մինչ Շնորհալին և Շնորհալուց հետո **փառք**-ը տառացույց բառի դերում ութ անգամ գործածվել է այբբենակապ ստեղծագործություններում (Կոմիտաս Ա Աղցեցի, Գրիգոր Նարեկացի, Հովհաննես Երզնկացի, Կիրակոս Երզնկացի, անանուն հեղինակներ):

Հետաքրքրական է, որ **փ**-ով սկսվող տողում մինչև շնորհալիական ու հետշնորհալիական բանաստեղծություններում չի գործածվել **Փրկիչ**-ը, Ներսես Շնորհալին այս բառը գործածել է միայն մեկ անգամ. «**Փրկիչ** բոլորից» («Առաւօտ լուսոյ»): Այս փաստը հուշում է, որ Շնորհալու այբբենակապ բանաստեղծությունների բառապաշարն առհասարակ համակողմանի ուսումնասիրելու կարիք կա:

«Տաղ աւետեաց»-ի վերջին տողն է «**Քեզ** փա՛ռք վայելէ յալիտեանս, ամէն»: Սրա յուրահատկությունն այն է, որ տառացույց են դարձել տարբեր հոլովածներ՝ **դու** դերանվան **քո**, **քեզ**, **քեւ** թեքված

ձևերը, որոնք ելակետային ձևից տարբեր տառով են սկսվում: Այսպես. «**Քո** անպատում խոնարհութեամբը» («Երգ տեառն Ներսիսի առաջնոյ աւուր միաշաբաթին...»), «**Քեզ** գոհութիւն երգեմք ընդ Հար» («Բան մաղթանաց»), «**Քեզ**, պաղատիմք ըստ աւագակին» («Երգք ճաշու ժամուց»), «**Քեզ** մըխիթար սակաւ այս բան» («Նորին թուղթ մխիթարութեան...»), «**Քե՛զ**, ընդ երանեալ մարտիրոսաց դասուցն» («Տաղ համարէն մարտիրոսաց...»), «**Քեզ** միշտ մերձ ծանիր» («Ողբերգութիւն անձին զղջացելոյ»), «**Քեզ** երգել զփառս» («Առաւօտ լուսոյ») «**Քեզ** համարել տայ, բարեկա՛մ» («Խրատ ուսումնականաց մանկանց»), «**Քեւ** համաձայնեալ, ընդ երկնայնոցն երգեմք ըզփառս» («Տաղ սրբոց հրեշտակապետացն...»): Սա նկատելի ընդհանրություն է, բնորոշ Շնորհալուին:

Մինչ Շնորհալին իբրև տառացույց միավոր **դու** դերանվան հոլովված **քեզ** ձևը գործածել է միայն Կոմիտաս կաթողիկոսը (Է դ.): Շնորհալուց հետո այդ նույն **քեզ**-ը գործածել են երեք ուրիշ հեղինակներ՝ Կարապետ վարդապետը (ԺԲ դար), Հովհաննես Երզնկացին (ԺԳ դ.), Գրիգոր Է Անավարզեցին (մահ. 1307):

Շնորհալին այբբենակապ ստեղծագործությունների այս դիրքում գործածել է ոչ միայն քերականական նշված ձևերը, այլ նաև **ք**-ով սկսվող բառային տարբեր միավորներ՝ բառույթներ, ինչպես՝ **քաւութիւն**, **քահանայ**, **Քրիստոս**, **քարոզել**, **քոյր** և այլն:

Եզրակացություն

1. Այբբենակապ բանաստեղծությունների տառացույց բառերի համեմատական (վիճակագրական) վերլուծությունը ցույց է տալիս, որ քննված տաղերը Ներսես Շնորհալու գրչի արգասիքն են, և դրանք շնորհաշատ հայրապետի գրական ժառանգության մեջ զետեղելն արդարացված է:

2. Տառացույց բառերի համեմատությունը բացահայտում է բառային մի շարք ընդհանրություններ, որոնք դրսևորվում են վստահաբար Շնորհալուն պատկանող և նրան թեաբար վերագրվող այբբենակապ ստեղծագործություններում:

3. Համեմատության հիմնական եզր դարձած «Տաղ աւետեաց Աստուածածնին, ի տէր Ներսիսէ Հայոց կաթողիկոսէ» վերնագրով ստեղծագործության տառացույց բազմաթիվ բառեր և նույնարմատ բաղադրություններ հանդիպում են Շնորհալու այբբենակապ ուրիշ համապատասխան տողերում: Այսպես՝ **բան**-ը, **ձայն**-ը և **փառք**-ը՝ իննական անգամ, **րաբունի**-ն՝ տասը, **ընդ**-ը՝ տասնմեկ, **ռահ**-ը՝ տասներկու, **ղաղեալ** ձևը՝ յոթ, **ի**-ն՝ տասնչորս անգամ և այլն:

4. «Տաղ ծննդեան ճրագալուցին, ի Տէր Ներսէս կաթողիկոսէ» վերնագրով ստեղծագործության իններորդ տողի տառացույց **թագաւոր** բառով սկսվում են ևս տասներկու ստեղծագործություններ: Սա պատահականության արդյունք է: Այս տաղի **ղամբար** տառացույց բառը և նույնափոխ **ղամբարումն, ղամբարափայլ** կազմությունները քանիցս հանդիպում են այբբենակապ ուրիշ ստեղծագործություններում, որը մտածողության ընդհանրության մի վկայություն է:

5. **Ք**-ի համար **դու** դերանվան **քեզ** բառաձևը Կոմիտաս կաթողիկոսից հետո քանիցս գործածել է Ներսես Շնորհալին՝ դրան ավելացնելով **քո**-ն և **քեւ**-ը: Ուրիշ ստեղծագործողներ հետագայում նույնպես գործածել են **քեզ**-ը, անշուշտ, նաև Շնորհալու ազդեցությամբ:

6. Տառացույց մի շարք բառեր ոչ մի անգամ չեն կրկնվում կամ շատ քիչ են կրկնվում այբբենակապ ստեղծագործությունների համանման դիրքերում: «Տաղ աւետեաց...»-ի դեպքում ինը տառացույց բառեր եզակի են: Այս հանգամանքը բացատրվում է Ներսես Շնորհալու ստեղծագործական անկաշկանդությամբ, ինքնատիպությամբ:

7. Հետազոտված այբբենակապ ստեղծագործությունները Շնորհալուն վերագրելն ավելի հավաստի կարող է դառնալ դրանց պատկերավորման համակարգը, արտահայտչամիջոցները, բառերի կապակցելիությունը և լեզվական այլ իրողություններ մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո:

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԱՅԲԲԵՆԱԿԱՊ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

«Անդրադարձութիւն...» - «Անդրադարձութիւն տառից յիշատակարանի»
«Առաւօտ լուսոյ» - «Նորին տեառն Ներսիսի Հայոց կաթողիկոսի՝ երգ աղաթական ի դէմս սրբոյ երրորդութեան, նաեւ իւրաքանչիւրոյ դիմի երրորդութեանն առանձնակի»

«Բան հաւատոյ...» - «Բան հաւատոյ վասն անեղին եւ եղելոց բարառնաբար, ի դիմաց հայկական տառից, չափաբերմամբ ոգեալ ի Ներսիսէ»

«Բան մաղթանաց» - «Տեառն Ներսիսի ասացեալ բան մաղթանաց»

«Բան ներտաղական» - «Տեառն Ներսէսի, բան ներտաղական, ի խրատ ոգւոց համայնից, ի դիմաց մերոյին, տառից տանց յիւրաքանչիւրսն քառից»

«Գովասանութիւն...» - «Գովասանութիւն գրոյն այբուբենի»

«Երգ յաղագս մեծի ուրբաթու գիշերին» - «Երգ տեառն Ներսիսի Հայոց կաթողիկոսի ասացեալ յաղագս մեծի ուրբաթու գիշերին»

«**Երգ ... վասն ննջեցելոց**» - «Երգ տեանն Ներսիսի ասացեալ առ ի Քրիստոս վասն ննջեցելոց»

«**Երգ տեանն Ներսիսի առաջնոյ ատուր միաշաբաթին....**» - «Երգ տեանն Ներսիսի առաջնոյ ատուր միաշաբաթին, եւ ի խորհուրդ արարչութեանն, եւ ի յարութիւնն Քրիստոսի»

«**Խրատ ուսումնականաց մանկանց**» - «Տեանն Ներսիսի, խրատ ուսումնականաց մանկանց, ի դիմաց այբեւբենից տառից, ոտանաւոր տաղիւ չափոյ»

«**Նորին թուղթ մխիթարութեան....**» - «Նորին թուղթ մխիթարութեան առ ոմն իշխան արեւելեան վասն որդւոյ իւրոյ տարաժամ մեռելոյ» -

«**Նորին յիշատակարան....**» - «Նորին յիշատակարան առակաց Սողոմոնի»

«**Ողբերգութիւն անձին զղջացելոյ**» - «Տեանն Ներսիսի Հայոց կաթողիկոսի՝ ողբերգութիւն անձին զղջացելոյ եւ բողոք իւրաքանչիւրոյ դիմի խոստովանաբար»

«**Տաղ Անտոնի....**» - «Տաղ Անտոնի, տեանն Ներսիսի ասացեալ»

«**Տաղ առաքելոցն....**» - «Տաղ առաքելոցն, ի Ներսիսէ կաթողիկոսէ»

«**Տաղ ւետեաց....**» - «Տաղ ւետեաց Աստուածածինն, ի տէր Ներսիսէ Հայոց կաթողիկոսէ»

«**Տաղ ծննդեան....**» - «Տաղ ծննդեան տեանն Ներսիսի կաթողիկոսի»

«**Տաղ ծննդեան ճրագալուցին....**» - «Տաղ ծննդեան ճրագալուցին, ի տէր Ներսէս կաթողիկոսէ»

«**Տաղ համարէն մարտիրոսաց....**» - «Տաղ համարէն մարտիրոսաց, Տեանն Ներսէսի»

«**Տաղ համարէն սուրբ հայրապետացն....**» - «Տաղ համարէն սուրբ հայրապետացն ի Ներսէս կաթողիկոսէ հայոց»

«**Տաղ Յովհաննու Մկրտչին....**» - «Տաղ Յովհաննու Մկրտչին, ի Ներսիսէ կաթողիկոսէ»

«**Տաղ սրբոց հրեշտակապետացն....**» - «Տաղ սրբոց հրեշտակապետացն, ի Ներսիսէ կաթողիկոսէ»

«**Տաղ սրբոց մարգարէիցն....**» - «Տաղ սրբոց մարգարէիցն, ի Ներսիսէ կաթողիկոսէ»

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ա. Ա., Գրաբարի ձեռնարկ, 4-րդ հրատ, Երևան, 1976:
Abrahamyan A. A., Grabari d'er'nark, 4-rd hrat, Erevan, 1976:
2. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973:
Atwar'yan Hr., Hayeren armatakan bar'aran, h. 2, Erevan, 1973:
3. Ալետիքեան Գաբրիէլ, Սիրմէլեան Խաչատուր, Ալգերեան Մկրտիչ, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836:
Awetiqean Gabrie'l, Siwrme'lean Xachatowr, Awgerean Mkrkich, Nor bar'girq haykazean lezowi, h. A, Venetik, 1836:
4. Բախչինյան Հենրիկ, Շարականի գրապատմական ուղին (5-14-րդ դարեր), Երևան, 2012:
Baxchinyan Henrik, Sharakani grapatmakan owghin (5-14-rd darer), Erevan, 2012:
5. Գրիգորեան Սամուէլ, Այբբենագիր. Հայ այբբենային բանաստեղծություն (7-19 դդ.), Երևան, 2016:
Grigorean Samowe'l, Aybbenagir. Hay aybbenayin banasteghc'owt'yown (7-19 dd.), Erevan, 2016:
6. Մատենագիրք Հայոց, ԻԱ. հատոր, ԺԲ. դար, Ներսէս Շնորհալի, գիրք Ա., Երևան, 2018:
Matenagirq Hayoc, IA. hator, JhB. dar, Nerse's Shnorhali, girq A., Erevan, 2018:
7. Ներսես Շնորհալի, Տաղեր և գանձեր, աշխատասիրությամբ Արմինե Քյոշկերյանի, Երևան, 1987:
Nerses Shnorhali, Tagher & gand'er, ashxatasirowt'yamb Armine Qyoshkeryani, Erevan, 1987:
8. Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1830:
Nerse's Shnorhali, Banq chap'aw, Venetik, 1830:
9. Շարաբխանյան Պ., Հանգաբանություն (հանգի տեսության և պատմության հարցեր), Երևան, 2015:
Sharabxanyan P., Hangabanowt'yown (hangi tesowt'yan & patmowt'yan harcer), Erevan, 2015:
10. Սուրբ Ներսէս Շնորհալի, Գովասանութիւն գրոյն այբուբենի, աշխատասիրութեամբ Սամուէլ Գրիգորեանի, Երևան, 2017:
Sowrb Nerse's Shnorhali, Govasanowt'iwn groyn aybowbeni, ashxatasirowt'eamb Samowe'l Grigoreani, Erevan, 2017:
11. Քյոշկերյան Ա. Մ., «Ներսես Շնորհալու նորահայտ տաղերի և հատված-տաղերի մասին/ Ներսես Շնորհալի (հոդվածների ժողովածու), Երևան, 1977:
Qyoshkeryan A. M., «Nerses Shnorhalow norahayt tagheri & hatvac'-tagheri masin / Nerses Shnorhali (hodvac'neri jhoghovac'ow), Er&an, 1977:

ДАВИД ГЮРДЖИНЯН - СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ БУКВОУКАЗЫВАЮЩИХ СЛОВ АЗБУЧНЫХ АКРОСТИХОВ НЕРСЕСА ШНОРАЛИ

Ключевые слова: Нерсес Шнорали, азбучный акrostих, заглавная буква строфы, буквоуказывающее слово, статистический анализ, стилометрия, авторство, творческая лаборатория

В огромном литературном наследии Нерсеса Шнорали важное место занимают алфавитные стихотворения. Сравнительный анализ лексического состава азбучных произведений этого типа, в частности, первых слов каждой строки, не является чисто лексикологической самоцелью. Это сравнение интересно также с другой точки зрения: оно способствует формированию определенного представления о творческой лаборатории Шнорали, его подходах, предпочтениях автора, опыте и вкусе, проявляющемся в выборе слов и т.д.

Сравнительный анализ азбучных слов является дополнительным средством установления или опровержения авторства того или иного произведения.

Что касается ряда стихов, в качестве автора которых указывается Шнорали, в некоторых рукописях они анонимны, но очень близки Нерсесу Шнорали и могут принадлежать его перу. Имеются также азбучные акrostихи, приписываемые Шнорали, но они встречаются в более поздних рукописях, и, возможно, авторство в данном случае было приписано Шнорали по ошибке. Эти акrostихи не всегда включаются в литературное наследие Шнорали, так как необходимы достоверные факты, указывающие на их авторскую принадлежность.

К произведениям Шнорали исследователи причисляют также и несколько азбучных акrostихов, в ряде случаев – с определенной долей неуверенности, с оговорками, в других случаях – с большей уверенностью.

Исследование первых слов каждой строки азбучных акrostихов выявило, что рассмотренные произведения принадлежат перу Нерсеса Шнорали, и их включение в литературное наследие благодатного католикоса вполне оправдано.

DAVIT GYURJINYAN - COMPARATIVE ANALYSIS OF LETTER INDICATING WORDS OF NERSES SHNORALI'S ALPHABETIC ACROSTICS

Keywords: *Nerses Shnorali, alphabetic acrostic, capital letter of the stanza, letter indicating word, statistical analysis, stylometry, authorship, creative laboratory*

Alphabetic poems occupy an important place in Nerses Shnorali's huge literary heritage. The goal of the comparative analysis of the lexicon of alphabetic works of this type, in particular, that of the first words of each line, is not merely lexicological. This comparison is remarkable from another point of view as well: it can give a certain idea of Shnorali's creative laboratory, as well as the approaches, preferences of the author, his experience and taste, manifested in the choice of words, etc.

The comparative analysis of alphabetic words is an additional means of establishing or denying the authorship of a particular work.

For a number of poems, the author of which is considered to be Shnorali, it is noted that they were preserved in some manuscripts without the name of the author, but they are in line with Nerses Shnorali's works and may belong to his pen. Only in later manuscripts there are also alphabetic acrostic attributed to Shnorali, but this attribution seems unreliable. These acrostics are sometimes not included in Shnorali's literary heritage, since reliable facts are needed to indicate their authorship.

Among Shnorali's works, scholars included several alphabetic acrostics, in some cases with a certain degree of uncertainty, with reservations, and in other cases with greater confidence.

A study of the first words of each line of alphabetic acrostics revealed that the works under study belong to the pen of Nerses Shnorali, and their inclusion in the literary heritage of the blessed Catholicos is fully justified.

Ներկայացվել է՝ 14.11.2023 թ.

Գրախոսվել է՝ 21.11.2023 թ.

**ՏԵՔՍՏԻ ՄԵԿՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ.
ՏԵՔՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

ՀՐԱՆՈՒՇ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածում արծարծվում է տեքստի մեկնելիությունը հոգելեզվաբանության տեսանկյունից՝ հիմք ընդունելով դրա կառուցվածքային, հաղորդակցական և բովանդակային առանձնահատկությունները: Հոդվածի նպատակն է վեր հանել տեքստի մեկնելիության տարբերակայնությունը՝ պայմանավորված լեզվական անհատի մտազործունեության առանձնահատկություններով:

Հիմնաբառեր՝ մեկնել, մեկնելիություն, բովանդակություն, իմաստ, ընդհանուր իմաստ, թաքնված իմաստ, խոր իմաստ, ամբողջականություն, ներկապակցում, նախադասության առկայական տրոհում, թեմա, ռեմա, տեքստի թեմատիկ զարգացում, տեքստի թեմա-ռեմատիկ կառուցվածք, գծային թեմատիկ զարգացում, թեմատիկ զարգացում անփոփոխ թեմայով

Ներածություն

Տեքստը՝ որպես բարդ իմաստային միավոր, մի շարք հոգելեզվաբանական առանձնահատկություններ ունի, որոնցից զուրկ են բառը, բառակապակցությունը և նախադասությունը: Այդ առանձնահատկություններն են ամբողջականությունը, ներկապակցումը, արտահայտչականությունը, կրեոլացվածությունը, նախադիպությունը, տարողունակությունը: Բացի այդ, տեքստն ամփոփում է նաև հաղորդակցվողների ոչ լեզվական հաղորդակցման տարրեր: Տեքստը մեկնելի միավոր է, այսինքն՝ հասցեատերը կարող է դրանից տարբեր իմաստներ ստանալ (Шахнарович 1995, Белянин 1999, Фрумкина 2001, Горелов 2004, Уланович 2010, Steinberg, Nagata, Aline 2013, Fernández, Cairns 2020):

Ցանկացած տեքստ պետք է ընկալվի, այսինքն՝ դրա բովանդակությունը պետք է վեր հանվի՝ մեկնվի: Տեքստը նշանային միավոր է, որը հասցեատիրոջ գիտակցության մեջ պետք է ձևավորի

որոշակի մտապատկեր: Ընդ որում, շատ կարևոր է, որ հասցեատերն ընկալի ոչ միայն տեքստի նեղ բովանդակությունը, այլև կատարի տեքստի մեկնություն՝ դրա լեզվական նշաններում ծածկագրված բովանդակության իմաստավորում:

Տեքստի հոգելեզվարանական մեկնության առանձնահատկությունները

Տեքստը բարդ նշանային լեզվական միավոր է, որի ընկալումը մտավոր ստեղծագործական գործընթացն է՝ մեկնությունը: Այս առումով տեքստը տարբերվում է այլ լեզվական միավորներից նրանով, որ դրանից կարելի է ինչ-որ բան քաղել, դուրս բերել՝ մեկնել:

Տեքստի մեկնելիությունը՝ որպես դրա կարևորագույն հատկանիշ, ընդունելի է հետազոտողների մեծամասնության կողմից (Белянин 1999, Фрумкина 2001, Уланович 2010, Fernández, Cairns 2020): Տեքստի մեկնելիությունը՝ ոչ միանշանակ ընկալումը, կախված է ընկալողի անհատական-բարոյական և հանրամշակութային հենքից: Հասցեագրողը և հասցեատերը կարող են ունենալ միևնույն տեքստի որոշակիորեն տարբերվող մեկնություններ: Հոգեբանության տեսանկյունից սա բացատրվում է նրանով, որ նրանց լեզվական ունակությունը, բառապաշարը, ընկալողական հենքը կարող են քիչ թե շատ տարբեր լինել, որը բնական է:

Հատկանշական է, որ ոչ բոլոր նշանային միավորներն են տեքստ համարվում: Այսպես, օրինակ՝ ճանապարհային երթևեկության նշանները, լոգոները, աղյուսակները, աքսիոմները տեքստեր չեն: Դրանք կարող են ունենալ միայն մեկ մեկնություն, այսինքն՝ ընկալման տարբերակներ չեն կարող ունենալ: Մինչդեռ տեքստ կարող է համարվել որևէ ստեղծագործության վերնագիրը («Война и мир», «Ավարայրի ճակատամարտը», «Շունն ու կատուն» և այլն), ծաղրանկարը և նույնիսկ դատարկ թուղթը կամ գովազդային պաստառը, եթե դրանք կարելի է մեկնել: Այսպիսով, մեկնելիությունն այն չափանիշն է, որով որոշակի նշանային միավոր կարելի է տեքստ համարել:

Մեկնելիությունը ենթադրում է, որ տեքստը պետք է ունենա որոշակի բովանդակություն և իմաստ, որն իրականության առարկաների և երևույթների և դրանց միջև կապերի հեղինակային արտացոլումն է: Տեքստն արտացոլում է իրականության առարկաները և դրանց միջև հարաբերությունները հասցեագրողի տեսանկյունից, նրա իմաստավորման պրիզմայով, որոնք նա արտացոլել է լեզվական միավորների միջոցով: Այսպես, լեզվական միավորները, որոնք ունեն իրենց կայուն բառարանային իմաստը, տեքստում ստանում են նոր, պայմանական նշանակություն և դառնում տեքստի միավորներ:

Ճանապարհային երթևեկության նշանները, լոգոները, ինքնաթիռների չվացուցակները և այլն ունեն միայն նշանակություն, սակայն զուրկ են իմաստից և, հետևաբար, *տեղեկատվական առումով կարևոր են, սակայն հաղորդակցման տեսանկյունից՝ չեզոք*:

Տեքստի բովանդակության և իմաստի տարբերությունը դրա մեկնելիության տեսանկյունից

Տեքստի *բովանդակությունը* և *իմաստը* մոտ, բայց տարբեր երևույթներ են: Բովանդակությունը տեքստում արտացոլված իրականությունն է՝ դրա հետ կապված գործողությունները և դրվագները: Իմաստն իրականության անձնավորված արտացոլումն է: Տեքստի իմաստը դրա բովանդակության ներդրումն է համատեքստ (*տեքստի իմաստ = տեքստի բովանդակություն + հաղորդակցական համատեքստ*): Համատեքստը տեքստում ծածկագրված իրականության մի հատված է, որը հղում է որոշակի իրավիճակի: Հաղորդակցական համատեքստը մի քանի գործառույթ է կատարում՝ նախ՝ կապակցում է տեքստի մասերը, ապա՝ կապ է ստեղծում տեքստի որոշակի հատվածի բովանդակության և իրականության որոշակի հատվածի միջև:

Իրականում տեքստը՝ որպես այդպիսին, իմաստ չունի, ինչպես ավանդաբար ընդունված է: Հասցեատերն ընկալման ընթացքում տեքստին իմաստ է հաղորդում:

Կարևոր է տարանջատել տեքստի *իմաստի մակարդակները*:

Հրոյական մակարդակում մարդն ընկալում է տեքստի բովանդակությունը՝ որպես գործողությունների, դրվագների շղթա, և սահմանում դրանց միջև ժամանակային և տարածական հարաբերություններ:

Երեխան հաճախ տեքստը ընկալում է միայն այս մակարդակով, քանի որ երեխայի գիտակցությունը նախ՝ դեռևս չի արտացոլել բավականաչափ լեզվական միավորներ և դրանց կարգերը (հասկացություններ և դրանց քերականական կարգերը), ապա՝ դեռևս ունակ չէ տարբերակելու և ընկալելու տարաբնույթ հասարակական և լեզվական երևույթներ:

Առաջինն *ընդհանուր իմաստի մակարդակն* է, որն արտացոլում է տեքստի ընդհանուր հաղորդակցական համատեքստը՝ օբյեկտիվ իրականությունը: Այս մակարդակում ընկալումը ենթադրում է պատճառահետևանքային կապերի հաստատում լեզվական և տրամաբանական կարգերի համապատասխանեցման (իրական ժամանակը քերականական ժամանակաձևերին, հստակությունը որոշյալ առմանը, քանակը թվի կարգին և այլն) միջոցով:

Ավելի խոր ընկալում տեղի է ունենում *թաքնված իմաստի (ներակա*

իմաստի) վերհանման միջոցով, երբ հասցեատերն ընկալում է հեղինակի մտահղացումը, բառիմաստային խաղը, գործաբանական համատեքստը:

Խոր իմաստի ընկալում տեղի է ունենում միայն հասցեատիրոջ անհատական կենսափորձի միջոցով: Փաստորեն, խոր իմաստի ընկալումը ճանաչողական գործընթաց է. մարդու անհատական աշխարհի պատկերն ընդլայնվում է նոր ճանաչողական տեղեկությամբ տվյալ տեքստի միջոցով (Белянин 1999, 58-59):

Օրինակ՝ հայ լեզվակիրը լսում է «Любовь зла, полюбишь и козла» ռուսերեն ասույթը և, բացի դրա բառացի բովանդակությունն ընկալելուց (ընդհանուր իմաստի մակարդակ), հասկանում է նաև, որ սերն անկանխատեսելի է կամ որ հեղինակը ոչ ակնհայտ, ներակա վիրավորում է այն անձին, որին սիրահարվել է ինչ-որ մեկը (թաքնված/ներակա իմաստի վերհանում): Եթե այս ամենի հետ հայ լեզվակիրը նաև ընկալում է, որ ռուս լեզվամշակույթում, ռուս աշխարհի լեզվական պատկերում այժը (козёл) տգեղ, ապիկար, անհաջող կենդանի է, ուրեմն նա ընկալել է նաև տեքստի խոր իմաստը, չէ որ այդ տեղեկությունը արտակա, բառային իմաստի միջոցով արտացոլված չէ տեքստում:

Տեքստի իմաստային հենակետերի նշանակությունը դրա հոգելեզվաբանական մեկնության գործընթացում

Տեքստի իմաստի վերհանմանը նպաստում են *իմաստային հենակետերը*՝ տեքստի լեզվական և ոչ լեզվական միավորները, որոնց միջոցով հնարավոր է վեր հանել համատեքստը և իմաստ ստանալ այդտեղից:

Տեքստն իմաստային համակարգ է, որն ուղիղ կամ միջնորդված առնչվում է իրականության հետ և ենթակա է տարբերակային ընկալման:

Ա. Բրուդնին տարբերակում է տեքստի երեք տեսակ՝ ըստ դրանց իմաստային կառուցվածքի տարողունակության մակարդակի (Брудный 1998, 136):

1. Առաջին տեսակի տեքստերում նշված չեն որոշակի իմաստային հենակետեր, որոնք սահմանազատում են իմաստի խորությունը և հնարավոր դարձնում տարբերակային ընկալումը: Այս տեսակի տեքստերին են պատկանում աստվածաշնչյան տեքստերը, գուշակությունները, կանխատեսումները և այլն:

2. Երկրորդ տեսակի տեքստերում բոլոր միավորներն օգտագործված են իրենց ուղիղ իմաստով: Այդպիսին են գիտական տեքստերը, դրանց իմաստային կառուցվածքը հստակ է:

3. Երրորդ տեսակի տեքստերում առկա են մի շարք ուղղորդող իմաստային գծեր, որոնք հասու են միայն խոր տարբերակային ընկալմանը: Սրանց շարքին են պատկանում գեղարվեստական

տեքստերը, որոնց բովանդակությունն այնքան անմիանշանակ է, որ առաջացնում է բազմաբովանդակություն, որն էլ առաջ է բերում գեղարվեստական տեքստերի տարբեր մեկնություններ: Արդյունքում, ընթերցողի ընկալումը կարող է էականորեն տարբերվել ինչպես այլ ընթերցողների ընկալումներից, այնպես էլ հեղինակի մտահղացումից:

Տեքստը հեղինակի մտահղացմանն ամենամոտ ընկալում է այն մարդը, որի գիտակցության հոգեբանական կառուցվածքն առավելագույնս մոտ է հեղինակի անձնային հոգեբանական առանձնահատկություններին:

Տեքստի կառուցվածքային առանձնահատկությունները

Չնայած նրան, որ տեքստը կարելի է բաժանել մասերի՝ գլուխների, պարբերությունների, նախադասությունների և այլն, տեքստն ունի որոշակի կառուցվածքային առանձնահատկություններ՝ *ներկապակցում* և *ամբողջականություն*:

Լեզվաբանության մեջ ամբողջականությունը տեքստի տեղեկատվական և թեմատիկ դաշտերի միասնականությունն է:

Հոգելեզվաբանությունը քննում է ամբողջականությունը տեքստի ձևավորման և ընկալման տեսանկյունից: Ընկալման տեսանկյունից ամբողջականությունը տեքստի իմաստային կարգ է, որը կարող է չունենալ որևէ լեզվական հարաբերակից՝ միավոր, որին այն հղում է: Սա տեքստի իմաստային ամբողջականությունն է: Տեքստի ձևավորման տեսանկյունից ամբողջականությունը դրսևորվում է այն ժամանակ, երբ ձևավորվող տեքստն ամփոփում է հեղինակի մտահղացումը: Այլ կերպ ասած՝ խոսքային գործունեության յուրաքանչյուր քայլ համահունչ է հեղինակի ծրագրին:

Ներկապակցումը կառուցվածքային առանձնահատկություն է, որն արտահայտվում է լեզվական միջոցներով: Ներկապակցումը տեքստի միավորների միջև գծային, իմաստային, շարակարգային (քերականական և շարահյուսական) և առոգանական կապն է: Ներկապակցումն ի հայտ է գալիս, երբ համադրվում են ինչպես տեքստի առանձին լեզվական միավորներ, այնպես էլ տեքստի առանձին հատվածներ՝ պարբերություններ, ենթագլուխներ, գլուխներ և այլն:

Ներկապակցումը կարող է լինել *ներքին* (իմաստային, տրամաբանական) և *արտաքին*: Իմաստատրամաբանական ներկապակցումն առկայանում է տեքստի իմաստային հատվածների հաջորդականության մեջ և տեքստի ամբողջականության պայմանն է: Արտաքին ներկապակցումը դրսևորվում է տեքստի միավորների ձևական կապակցման մեջ: Սա ձևի ներկապակցում է:

Հատկանշական է, որ արտաքին ներկապակցումը լրացուցիչ է. այն

ձևական բնույթ է կրում ներքին կապակցվածության և ամբողջականության հանդեպ և կարող է նաև բացակայել: Ներկապակցման բացակայությունը չի ոչնչացնում տեքստը՝ որպես կուռ ամբողջություն: Սակայն ամբողջականության բացակայությունն ապակազմավորում է տեքստը և այն վերածում հնչող կամ գրաֆիկական անկազմակերպ գոյացության: Տեքստ է կոչվում այն լեզվական միավորը, որը պարտադիր ամբողջական է, բայց ոչ միշտ ներկապակցված: Տեքստի միջուկային ամբողջականությունն արտացոլվում է տեքստի հիմնաբառերում կամ հասցեագրողի մտահղացման լեզվական ձևակերպումներում: Սա ամբողջական տեքստի ձևավորման նախապայմանն է, որը կարող է լեզվականանալ որպես ներկապակցված լեզվական միավոր՝ տեքստ:

Այսպես, օրինակ՝ *«Ավանդական կրթության տեսանկյունից ոչ բոլոր անհատները, որոնք փոխակերպում են վերացարկումը, կարող են տարբերակել պարադոքսալ զգացումների միությունը»* նախադասությունը ձևական տեսանկյունից կարծես ներկապակցված տեքստ է թե՛ քերականական, թե՛ շարահյուսական տեսանկյունից, սակայն զուրկ է իմաստից: Առանց ամբողջականության՝ այս ասույթը չի կարող տեքստ համարվել: Սակայն հիմնաբառերից կազմված ներքոբերյալ բառախումբը փաստացի ներկապակցված չէ (առկա է միայն հնչերանգը), սակայն իմաստատրամաբանական կապը և ամբողջականությունն այս բառախումբը վերածում են տեքստի:

100 բառ՝ մի ամբողջ կյանք...

Օրորոց: Տակաշոր: Լաց:

Բառ: Քայլ: Փռշտոց: Թաց:

Վազվզոց: Խաղալիք: Մողես:

Բակ: Ճոճանակ: Պարտեզ:

Դպրոց: Վազվզոց: Բանակ:

Գնդակ: Հարված: Գիպս: Հենակ:

Սակայն գիտնականների մեծամասնությունը պնդում է, որ տեքստը պետք է լինի և՛ ամբողջական, և՛ ներկապակցված:

Չեխ լեզվաբան Վ. Մատեզիուսը, փորձելով նկարագրել նախադասության քերականական կառուցվածքը, իրականում տվել է տեքստի յուրօրինակ սահմանում: Ի սկզբանե Վ. Մատեզիուսը տվել է *նախադասության առկայական տրոհումը*, որը պետք է բացահայտեր նախադասության հաղորդակցական արժեքը: Նրա կարծիքով՝ նախադասությունը պետք է ունենա *թեմա* և *ռեմա*: Թեման նախադասության ելակետային՝ հին, տեղեկությունն է, ռեման այն նոր

տեղեկությունն է, որը հայտնում են թեմայի մասին այդ նախադասությամբ:

Օրինակ՝ *Նա* (թեմա) *հանդես եկավ* (փոփոխության, նոր տեղեկության նշույթը) *փայլուն փակման խոսքով* (ռեմա):

Այս տարվա դիմորդները (թեմա) *լավն են* (ռեմա):

Փաստորեն, ռեման ամփոփում է այն տեղեկությունը, որի համար կազմվում է տվյալ նախադասությունը: Այսինքն՝ ռեման հաղորդակցման ծավալման, զարգացման խնդիր է լուծում:

Թեման և ռեման կարող են արտահայտվել ինչպես նախադասության գլխավոր, այնպես էլ՝ երկրորդական անդամների միջոցով: Առկայական տրոհման արդյունքում նախադասությունը բացահայտում է իր հաղորդակցական արժեքը: Որոշ գործառական տեսություններում հանդիպում են թեմա և կիզակետ՝ ֆոկուս, կամ թեմա և մեկնաբանություն եզրերը:

Հատկանշական է, որ նախադասության քերականական և առկայական տրոհումների նպատակը տարբեր է: Առաջինը վեր է հանում նախադասության գլխավոր և երկրորդական անդամները, իսկ երկրորդը՝ հաղորդակցական արժեքը: Որոշ դեպքերում այս երկու տրոհումները կարող են համընկնել: Օրինակ՝ *Ես գալիս եմ* նախադասության մեջ *ես-ը* և՛ ենթական է, և՛ թեման, իսկ *գալիս եմ-ը*՝ և՛ ստորոգյալն է, և՛ ռեման:


Ի սկզբանե այս տեսությունը մշակվել էր նախադասության վերլուծության նպատակով, սակայն հետագայում պարզ դարձավ, որ այն բացահայտում է նախադասությունների իմաստային կապը և ընկալումը տեքստում: Խոսքը կազմվում է այն սկզբունքով, որ յուրաքանչյուր նոր ասված նախադասություն պետք է նոր տեղեկություն հաղորդի: Ուստի՝ տեքստում յուրաքանչյուր նախադասության ռեմա վերածվում է թեմայի իրեն հաջորդող նախադասության համար, իսկ դրա մասին նոր տեղեկությունն արդեն նոր ռեման է: Նախադասությունների իմաստային կապը տեղի է ունենում թեմա-ռեմատիկ շղթայական ծավալման սկզբունքով, որը կոչվում է *տեքստի թեմատիկ զարգացում* կամ *տեքստի թեմա-ռեմատիկ կառուցվածք*:

Տեքստի թեմատիկ զարգացման առանձնահատկությունները

Տեքստի թեմատիկ զարգացման երկու տեսակ կա՝ *գծային թեմատիկ զարգացում* և *թեմատիկ զարգացում անփոփոխ թեմայով*:

Առաջինի դեպքում գործում է վերը նկարագրված հաջորդականությունը (տե՛ս նկար 1):

Նկար 1 *Գծային թեմատիկ զարգացում*



Եթե տեքստի բոլոր նախադասություններում թեման նույնն է, ապա առկա է թեմատիկ զարգացում անփոփոխ թեմայով (տե'ս նկար 2):

Նկար 2 *Թեմայիկ զարգացում անփոփոխ թեմայով*

- T → R1 Ուսանողները (թեմա) լսարանում են (ռեմա 1).
- T → R2 Նրանք (թեմա) դասախոսություն են լսում (ռեմա 2).
- T → R3 Երիտասարդները (թեմա) հետաքրքրությամբ բացահայտում են մարդու ներաշխարհի առանձնահատկությունները (ռեմա 3)

Կարող են լինել տեքստեր խառը թեմա-ռեմատիկ հարաբերություններով: Տեքստի թեմա-ռեմատիկ կառուցվածքի վերհանումը նպաստում է հաղորդակցական համատեքստի և տեքստի ամբողջականության բացահայտմանը: Խոսքը կառուցվում է նոր տեղեկության փոփոխին ներմուծմամբ, որը հոգեբանորեն թույլ է տալիս ճիշտ ընկալել և հասկանալ:

Եզրակացություն

Այսպիսով, տեքստը բարդ հոգեբանական-հաղորդակցական երևույթ է, որն ամփոփում է կապակցված, հարաշարժ և որոշակի հաջորդականությամբ դասավորված լեզվական և ոչ լեզվական միավորներ (նշաններ և պատկերներ) և ունի որոշակի բովանդակություն, հանրագումարային իմաստ և ենթակա է տարրնկալման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Белянин В.П. Введение в психолингвистику: Учебное пособие. М.: Издательство ЧеРо, 1999.
Beljanin V.P. Vvedenie v psiholingvistiku: Uchebnoe posobie. M.: Izdatel'stvo CheRo, 1999. (In Russian)
2. Брудный А.А. Психологическая герменевтика. М.: Лабиринт, 1998.
Brudnyj A.A. Psihologicheskaja germenevtika. M.: Labirint, 1998. (In Russian)
3. Горелов И.Н., Основы психолингвистики. М.: Лабринт, 2004.
Gorelov I.N., Osnovy psiholingvistiki. M.: Labrint, 2004. (In Russian)
4. Уланович О.И. Психолингвистика: учеб. пособие. Минск: Гревцова, 2010.
Ulanovich O.I. Psiholingvistika: ucheb. posobie. Minsk: Grevcova, 2010. (In Russian)
5. Фрумкина В.М. Психолингвистика. М.: Academia, 2001.
Frumkina V.M. Psiholingvistika. M.: Academia, 2001. (In Russian)
3. Шахнарович А.М. Общая психолингвистика: Учебное пособие. М.: РОУ, 1995.
Shahnarovich A.M. Obshhaja psiholingvistika: Uchebnoe posobie. M.: ROU, 1995. (In Russian)
7. Fernández E., Cairns H. (eds.) The Handbook of Psycholinguistics. NJ: John Wiley and Sons Inc. 2020.
8. Steinberg D., Nagata H., Aline D. Psycholinguistics: Language, Mind and World. Second Edition. London and New York: Routledge, 2013.

ГРАНУШ ТОВМАСЯՆ - ԻՆՏԵՐՓՐԵՏԱԿՆԵՐ ԵՄՔՏԱԿ: ՏՐՈՒԿՏՈՐՆԵՐ ԽԱՐԱԿԵՐԻՏԻԿԻ ԵՄՔՏԱԿ Տ ՕՒԿԻ ՓՏԻԽՈԼԻՆԳՎԻՏԻԿԻ

Ключевые слова: *интерпретировать, интерпретация, содержание, смысл, общий смысл, скрытый смысл, глубокий смысл, целостность, когезия, актуальное членение предложения, тема, рема, тематическое развитие текста, тема-рематическая структура текста, линейное тематическое развитие, тематическое развитие с неизменной темой.*

В статье рассматриваются особенности психолингвистической интерпретации. Представленный анализ исходит из характерных для

текста структурных, коммуникативных и содержательных переменных. Цель статьи - выявить вариативность интерпретации текста с точки зрения особенностей и содержания речемышления языковой личности.

HRANUSH TOVMASYAN - TEXT INTERPRETATION: STRUCTURAL CHARACTERISTICS OF THE TEXT FROM THE PSYCHOLINGUISTIC PERSPECTIVE

Keywords: *interpret, interpretation, content, meaning, general meaning, hidden meaning, deep meaning, integrity, cohesion, actual division of the sentence, theme, rheme, thematic development of the text, theme-rhematic structure of the text, linear thematic development, thematic development with an invariable theme.*

The article discusses the peculiarities of text interpretation from a psycholinguistic point of view, given its structural, communicative, and content features. The aim of the article is to highlight text interpretation variability due to the peculiarities of the mental content and capacity of a linguistic individual.

Ներկայացվել է՝ 04.10.2023 թ.
Գրախոսվել է՝ 30.10.2023 թ.

ON TERMINOLOGY OF TYPES OF CHINESE DICTIONARIES

MERI KNYAZYAN

Abstract

The paper is devoted to the study of different Chinese terms that denote types of dictionaries/reference books in Chinese.

The English word *dictionary* has several Chinese equivalents, including the archaic term 字书 (*zìshū*, character book) and modern terms 字典 (*zìdiǎn*, character dictionary), 词典 (*cídiǎn*, word dictionary, or simply dictionary), and 辞典 (*cídiǎn*, *lexicon*), and the more general term 辞书 (*císhū*, lexicographical works). Depending on the kind of linguistic units that are selected as its entries, Chinese - foreign dictionaries can be a character dictionary, a word dictionary, or a dictionary of characters and words.

A Chinese lexeme can be a monosyllabic morpheme in the form of a single character like 眼 (*yǎn*, eye), 看 (*kàn*, look), 不 (*bù*, no; not) and 了 (*le*), or a multi-syllabic morpheme consisting of two or more characters, like 葡萄 (*pútáo*, grape) and 巧克力 (*qiǎokèlì*, chocolate). Unlike conventional dictionaries in which multi-syllabic morphemes are treated as sub-entries, the dictionary of Chinese lexemes 辞位 (*cíwèi*) that serves the needs of teaching Chinese as a foreign language, treats them on an equal footing as single characters. The sub-entries of 辞位 (*cíwèi*) dictionary correspond to English words and are composed of a head character or head lexeme plus another character or lexeme. For instance, the sub-entries under 眼 (*yǎn*, eye) are 眼光 (*yǎnguāng*, vision), 眼睛 (*yǎnjīng*, eye), etc.; and the sub-entries under 葡萄 (*pútáo*, grape) are 葡萄干 (*pútaogān*, raisin), 葡萄酒 (*pútaojiǔ*, wine), 葡萄糖 (*pútaotáng*, glucose) and 葡萄牙 (*pútaoyá*, Portugal).

Keywords: *Dictionary, Chinese, 字 zì; 词 cí; 辞典 cídiǎn, characters, lexeme, morpheme, entry*

Introduction

Moser (1991) has mentioned that the greatest difficulty in learning Chinese is the literacy. He brings the following reasons: (1) Chinese character writing system is more difficult to learn than alphabetic writing systems; (2) Even for frequently used Chinese characters, the instructions of the pronunciation are not so clear; (3) Chinese dictionaries cannot skillfully give the root, that would make it easy to memorize; (4) Arrangement of the characters in Chinese dictionaries is still complex.

The paper researches different types of Chinese dictionaries to help the learner of Chinese to choose the reference books that will meet their needs.

1.1 字(zì), 辭(cí), and 詞(cí) in Traditional Chinese Grammar

Since ancient times, native Chinese speakers, by their linguistic intuition, recognize the following two as the minimum units, 言(yán), and 字(zì), both meaning 'character'.

言(yán) is a linguistic unit and at the same time it refers to langue or sentence. In modern Chinese, some cases remain for 言(yán) as a linguistic unit such as 五言诗(wǔ yán shī, five-character poem), and 万言书(wàn yán shū, ten-thousand-character essay). Even so, 言(yán) never represents the minimum category as a linguistic unit.

字(zì, character) is a unit for writing, representing a character with explanation from Xu Shen in his *Elucidating Graphs and Analysing Characters: Preface*: "Forms and phonetics complement each other, which is the feature of a compound character." 字(zì) is also the minimum category for linguistic unit such as 实字(shí zì, notational character), and 虚字(xū zì, expletive character) in classic text and some typical examples from Ma Jianzhong (1898): 名字(míng zì, noun) 代字(dài zì, pronoun), 动字(dòng zì, verb), 静字(jìng zì, adjective), 状字(zhuàng zì, adverbial) 介字(jiè zì, preposition), 连字(lián zì, conjunction), "助字"(zhù zì, auxiliary character), zhu zi, "叹字(tàn zì, interjection), ".

In classic Chinese, particularly written Chinese, two more terms are also used to categorize linguistic units, namely 词(cí, word) and 辞(cí, diction). Considering the differentiation in their meaning and usage by Duan Yucai in the "Terms of 𠄎" (cí, word) from *Annotations to the Elucidating Graphs and Analysing Characters*, they do not, though, differ much in daily use. Words or dictions in researches of classic Chinese grammar usually refer to general grammatical unit rather than the minimum linguistic unit.

Ma Jianzhong (1898/1983: 24-28) attached new meaning for 词 in his *Ma's Grammar*. His 起词 (qǐcí), 语词 (yǔcí), 止词 (zhǐcí), 表词 (biǎocí), 司词 (sīcí), equal to subject, predicate, object, complement, and prepositional complement respectively nowadays.

1.2 Dictionary: 字典 zìdiǎn; 词典 cídiǎn; and 辞典 cídiǎn

Character is the basic unit of writing in Chinese. Traditionally, reference books that take characters as entries, arrange them in a certain order, and describe their structure, pronunciation and meaning are called character books. The most famous one is *Elucidating Graphs and Analysing Characters* written by Xu Shen and annotation by Duan Yücai (1815/1981). The titles of Chinese reference books published in the ancient time varied, but the character 字 (zì, character) was almost certainly part of the title, for example, *A Character Master* (Li Congzhou 1254), *Correct Character Master* (Zhang Zilie, c. 1670) and *A Collection of Characters* (Méi Yīngzuò 1615). After the *Kangxi Dictionary* edited by Chen Tingjing (1716) was published, the word dictionary gradually became a commonly used title for this kind of reference books due to its big circulation and wide-spread influence. Among all, the ones with relatively huge influence are *Great Zhonghua Dictionary* (Lu Feikui and Ouyang Fucun 1915), *Xinhua Dictionary* (Dictionary Editing Office of the Language Institute of CASS 1957-2011) and *A Comprehensive Dictionary of Chinese Characters* (Xu Zhongshu 1995).

The initial meaning of 词 (cí) is that its meaning is widely recognized but is irrelevant to its linguistic sign (under the entry of 词 [cí] in *Elucidating Graphs and Analysing Characters*), which is the so-called auxiliary word, auxiliary character, syntactic expletive, functional character or functional word. Although there was such monograph on functional words as *Explanation of Words in the Classics* (Wang Yinzhi 1799), there was no reference book entitled as dictionary.

At the very beginning, when modern Chinese scholars introduced western grammatical terms, they still used 字 (zì) as the corresponding Chinese unit for word and related terms. For example, terms adopted in *Ma's Grammar* (Ma Jianzhong 1898) are 名字 (míng zì, noun), 代字 (dài zì, pronoun), 动字 (dòng zì, verb), 静字 (jìng zì, adjective), 状字 (zhuàng zì, adverb), 介字 (jiè zì, preposition), 连字 (lián zì, conjunction), 助字 (zhù zì, auxiliary word) and 叹字 (tàn zì, interjection).

Zhang Shizhao (1907) first translated the English parts of speech “noun, pronoun, verb, adjective, adverb, preposition, conjunction” into Chinese 名词 (míngcí), 代名词 (dàimíngcí), 动词 (dòngcí), 形容词

(*xíngróngcí*), 副词 (*fùcí*), 介词 (*jiècí*), 接续词 (*jiēxùcí*). After that, these terms became deep-rooted in Chinese linguistics and the Chinese lexicographers began to name reference books with words (characters included) as dictionaries.

Typical examples include the bilingual *New Chinese-English Dictionary* (Li Yürü 1918) and *Grand Chinese-English Dictionary* (Zhang Yunpeng 1920), and the monolingual *Chinese Dictionary* (Zhou Pan 1922), *A Modern Chinese Dictionary* (Dictionary Editing Office of the Language Institute of CASS 1960-2013) and *A Comprehensive Chinese Dictionary* (Luo Zhufeng 1993).

There is no problem naming foreign language or foreign language-Chinese dictionaries as 词典 (*cídiǎn*, dictionary) in Chinese since these dictionaries originally have words as their entries. Yet, if naming Chinese or Chinese-foreign language dictionaries as 词典 (*cídiǎn*, dictionary) as well, may not be perfectly justifiable unless we redefine 词 (*cí*, word). The 词 (*cí*, word) as a term of linguistics is often defined by Chinese linguistics circle as “the smallest language unit that can be freely adopted” (Zhang Bin, 2010: 48). The lexicographers defined it as “the smallest independent pronunciation and meaning unit that can be freely applied in a language” (*Grand Chinese Character Dictionary*, ① under the entry) or “the smallest unit in a language that can be freely applied” (*Modern Chinese Dictionary*, ③ under the entry). Therefore, 词 (*cí*, word) has two defining features. It is the smallest unit and can be freely applied. Apart from the smallest unit that can be freely applied, there is the smallest dependent unit as well, be it in Chinese or English.

The English dictionaries at an early stage were named as word-books. It only involved words without any affixes. Theoretically, they can follow this tradition even in modern time. In contrast, Chinese or Chinese-foreign language dictionaries cannot. They cannot only include such smallest applicable units as 我 (*wǒ*, I), 这 (*zhè*, this), 一 (*yī*, one), 好 (*hǎo*, good) and 来 (*lái*, come) without containing the smallest dependent units including 们 */men/*, 子 */zi/*, 些 */xie/*, 个 */ge/*, 者 */zhe/*, 的 */de/*, 着 */zhe/*, 了 */le/* and 过 */guo/*. In other words, Chinese or Chinese-foreign language dictionaries not only include characters such as words, but also characters such as affixes. Therefore, naming such reference books as dictionary is not appropriate.

Another type of reference books with diction being the entries are called diction dictionary. A basic meaning of diction is “what one writes and says” (*The Source of Diction*, ② under the entry; *Comprehensive Chinese Dictionary*, ③ under the entry), and it serves to refer to a linguistic unit bigger than a character. For example, it is said in *The Book of Changes* that “well-intentioned people often speak less whereas ill-intentioned people often

say a lot”. At the very beginning of the Republic of China, people began to name reference books that had diction as diction books, for example, *New Encyclopedia Diction Book* (Huang Moxi 1911). Later, Chinese reference books which had characters and words as entries and sub-entries were called diction dictionaries, such as *The Source of Diction* (Lu Erkui et al. 1915) and *Comprehensive Dictionary* (Shu Xincheng 1936-1938). In this way, it seems that dictionaries and diction dictionaries have become reference books under different titles but with the same nature.

Nowadays, dictionary and diction dictionary can be regarded as synonyms that are mutually interchangeable (Compare the entry of 词典 (*cídiǎn*), dictionary with 辞典 (*cídiǎn*), diction dictionary, in *Grand Chinese Dictionary* and *Grand Modern Chinese Dictionary*). Yong Heming (2006: 20) states that “the fact that ‘词典’ (*cídiǎn*, dictionary) and ‘辞典’ (*cídiǎn*, lexicon) are interchangeable complies with the practical use of language. No matter it is ‘词典’ (*cídiǎn*) or ‘辞典’ (*cídiǎn*), they are the same word.” The author thinks that in fact, these two are not perfectly interchangeable. Nor are they the same word. Lexicons include character dictionaries and dictionaries. For instance, we can say that “*Kangxi Dictionary* is a lexicon”, or “*Modern Chinese Dictionary* is a lexicon”. However, dictionaries can have characters and words as the entries and sub-entries, but based on the definitions of 词 (*cí*, word) in different dictionaries, it can only refer to characters that can be used as words instead of those that cannot. As a result, dictionaries cannot cover what character dictionaries comprise. Few lexicographers would say, “*Elucidating Graphs and Analysing Characters* or *Kangxi Dictionary* is a dictionary”.

However, Yong Heming (2006: 20) argued that 词典 (*cídiǎn*, dictionary) and 辞典 (*cídiǎn*, lexicon) cannot be comprehended separately as “dictionary of words” or “dictionary of diction”. It is likely that their original meanings were derived in this way, but language constantly develops and the meanings of words evolve. From a modern perspective, the connotations and denotations of 词典 (*cídiǎn*, dictionary) and 辞典 (*cídiǎn*, lexicon) have been considerably extended so that they can cover any Chinese dictionary and “any other lexicon apart from Chinese dictionaries”.

In order to prove this statement, Yong Heming did a survey on the titles of 1,066 dictionaries. “The result showed that among Chinese lexicons, the majority are entitled as ‘词典’ (*cídiǎn*, dictionary) with some ‘辞典’ (*cídiǎn*, lexicon); whereas among non-Chinese lexicons, the proportions of other terms are more or less the same.” (ibid.)

The author believes that the research on the differences and commonalities of the meaning and usage of 词典, (*cídiǎn*, dictionary) and 辞典, (*cídiǎn*, lexicon) cannot be only reliant on statistics, but also need to refer to the opinions of experts in this field. The Lexicographical Society of China represents the top-level academic organization of Chinese lexicographers. Observing its organizational structure, we can find that there are eight professional committees under it:

1. Academic Committee (学术专业委员会)
2. Lexicographical Editing and Publishing Committee (辞书编辑出版专业委员会)
3. General-Purpose Dictionary Committee (语文词典专业委员会)
4. Encyclopedia Committee (百科全书专业委员会)
5. Bilingual Lexicography Committee (双语辞典专业委员会)
6. Special Dictionary Committee (专科词典专业委员会)
7. Lexicography Modernization Committee (辞典编纂现代化专业委员会)
8. Theory and History of Lexicography Committee (辞典理论与辞书史专业委员会)

Among all those committees, the responsibilities of committees' No. 1, 2, 7 and 8 cover the whole profession. Except for No.1, the titles of the remaining three all involve either 辞书, (*císhū*, lexicographical works) like 辞书编辑, (*císhū biānji*, lexicographical editing) and 辞书史, (*císhūshǐ*, history of lexicography) or 辞典, (*cídiǎn*, lexicon) like 辞典编纂, (*cídiǎn biāzuǎn*, lexicography) and 辞典理论 (*cídiǎn lǐlùn*, theory of lexicography). The other four committees are named after the categories of reference books, among which No 3 and 6 have 词典, (*cídiǎn*, dictionary) in their titles, namely 语文词典, (*yǔwén cídiǎn*, Chinese language dictionary) and 专科词典, (*zhuānkē cídiǎn*, profession-specific dictionary), No. 4 is titled as 百科全书, (*bǎikē quánshū*, encyclopedia), and No. 5 has 双语辞典, (*shuāngyǔ cídiǎn*, bilingual dictionary) in its title. It is not difficult to find that diction book/dictionary is regarded as the general term of this discipline covering diction dictionary, dictionary and encyclopedia, which are more than what dictionary covers. The titles of committees No. 3, 6 and 8 especially deserve our attention. Looking backwards, the title of 辞典理论与辞书史, (*cídiǎn lǐlùn yǔ císhūshǐ*, (theory of diction dictionary and history of dictionary) seems strange to some extent since it has not adopted 辞典理论与辞典史, (*cídiǎn lǐlùn yǔ cídiǎnshǐ*, theory and history of diction dictionary) or 辞书理论与辞书史, (*císhū lǐlùn yǔ císhūshǐ*, theory and history of dictionary) in order to remain consistent. The author supposes that the reason to adopt 辞典理论,

(cídiǎn lǐlùn, theory of diction dictionary) is probably because there are various kinds of dictionaries, it is hard to cover the theories of the whole field. And the reason why 辞书史, (císhūshǐ, history of dictionary) is probably that this title can reflect the largest scale and development history of this discipline since 辞书, (císhū, dictionary) is “the general term for ‘字典’, (character dictionary), ‘辞典’, (diction dictionary), ‘百科全书’, (encyclopedia) and ‘专科辞典’, (profession-specific dictionary)” (辞海, Cí Hǎi, Collection of Words 1980, under the entry of 辞书, dictionary). Besides, such general terms as 字书 (zìshū, character book) and 类书 (lèishū, book by category) emerged far earlier than 辞典 (cídiǎn, diction dictionary), which might also be a factor. In the titles of two committees containing 词典 (cídiǎn, dictionary), there may be two reasons for the adoption of 专科词典 (zhuānkē cídiǎn, profession-specific dictionary) rather than 专科辞典 (zhuānkē cídiǎn, profession-specific diction dictionary). Firstly, the character of 辞, (cí, diction) itself has the meaning of diction; and secondly, usually profession-specific reference books involve professional terms that are multi-character expression which are freely applicable. That is to say, it is words rather than individual characters that are embodied in it. Therefore, it is justifiable to have it named as 专科词典. In comparison, although the title of 语文词典 (yǔwén cídiǎn, Chinese language dictionary) reflects the modern usage of 词典 (cídiǎn, dictionary), the argument is not adequate enough since it is in conflict with the definition of 词典 by relevant dictionaries. The definition of 词典 under the entry of 词典 by both Modern Chinese Dictionary and Grand Chinese Dictionary is that “reference books that collect vocabulary and illustrate them”. Their definitions of 词汇, (cíhuì, vocabulary) are “the general term for the words and set phrases in a language” (entry of 词汇 in *Modern Chinese Dictionary*) and “the collection of all the words and set phrases used in a language, which is the building material of a language” (entry of 词汇 in *Grand Chinese Dictionary*). Naturally, characters that cannot be freely applicable as words are not words, let alone set phrases. Nowadays, as many English dictionaries do, many Chinese and Chinese-foreign language dictionaries also embody affixes in addition to words. There is no problem with English dictionaries to do so since “diction”, the stem of “dictionary”, means wording, whose meaning is compatible with affixes. In contrast, the Chinese 词典 (cídiǎn, dictionary) has excluded non-word language units by its definition. Reference books like Dictionary of the Oracle Script (Xu Zhongshu, 2014) and Classified Dictionary of Ancient Scripture (Gao Ming and Xu Baikui, 2008) that specifically record characters as entries do not belong to the category of dictionary. From the perspective of terminology, if character dictionaries in

real sense belong to linguistic reference books, 语文辞典 makes more sense than 语文词典.

Conclusion

We can draw the conclusion based on the meaning and usage of 字 (zì), 词 (cí), 辞 (cí) that till now, 字 (zì) is the minimum writing unit, and most characters represent the minimum linguistic unit; both 词 (cí) and 辞 (cí) refer to linguistic elements of certain grammatical function such as 虚词 (xū cí, non-substantial words) or 虚辞 (xū cí, non-substantial phrases). The only difference lies in their frequency with 辞 (cí) being of higher ratio. In modern times, 词 (cí) serves as the translation for word in English. It fills the semantic void for a unit bigger than character in form but of equal status in semantics with it or word. 词 (cí) in this sense soon roots deeply in Chinese linguistics and lexicology overwhelming the status of 辞 (cí) in linguistic terminology. Yet this is still not the case for Chinese lexicology especially when considering the names of professional committees in the Lexicographical Society of China.

REFERENCES

1. Alison M. and M. Laurance (2007). Learning Chinese Characters. A revolutionary new way to learn and remember the 800 most basic Chinese characters. TUTTLE Press.
2. Atkins, B., T. Sue and Michael Rundell (2008). The Oxford Guide to Practical Lexicography. Oxford: Oxford University Press.
3. Bejoint, Henri. (2010). Modern Lexicography: An Introduction. Beijing: Foreign Language Teaching and Research Press/Oxford University Press.
4. Bussmann, Hadumod (1996/2000). Routledge Dictionary of Language and Linguistics. Trans. and ed. Gregory P. Trauth & Kerstin Kazzazi. London/Beijing: Foreign Language Teaching and Research Press.
5. Chen Guohua & Wang Wei 陈国华、王薇 (2007), 从《英语搭配大辞典》看英语搭配词典的编写原则, 《外语教学与研究》(6): 468-473。
6. Chen Guohua 陈国华 (2010), 英语学习词典中谓词的语法搭配信息, 《外语教学与研究》(Foreign Language Teaching and Research) 42 (5) : 364-373。
7. Chen Guohua 陈国华 (2013), 《新时代英语学习词典的研编》, (New Age English-Chinese Learner's Dictionary Research and Compilation). Beijing: The Commercial Press.
8. Chen Guohua 陈国华 (2013), 语气、语式、态与宣意元素, 《当代语

- 言学》(Contemporary Linguistics) 15 (1) : 20-34。
9. Crystal, David (2003). A Dictionary of Linguistics and Phonetics, 6th edition. Oxford: Blackwell.
 10. Yong Heming and Jing Peng (2008). Chinese Lexicography: A History from 1046 BC to AD 1911. Oxford University Press.
 11. Kargren, Bernhard (1926). Philology and Ancient China. Oslo: H. Aschehoug & Co. Cambridge, Mass. Harvard University Press.
 12. Richanrds, J.C (1998). Longman Dictionary of Language Teaching and Applied Linguistics. London: Longman.
 13. Yang, S.J (1985). Chinese Lexicology & Lexicography: A Selected and Classified Bibliography. Chinese University Press.
 14. Yong, Heming & Peng Jing (2008). Chinese Lexicography: A History from 1046 BC to AD 1911. Oxford: Oxford University Press.
 15. 陈国华 (2013a), 语气、语式、态与宣意元素, 《当代语言学》15 (1) : 20-23。
 16. 陈国华、田兵 (2008), 下一代英语学习词典的设计特征, 《外语教学与研究》40 (3) : 224-233。
 17. 陈国华等 (2013), 《新时代英汉学习词典的研编》。北京: 商务印书馆。
 18. 陈亦民 (2013), 《汉文字干支》。北京: 语文出版社。
 19. 郭锐 (2002), 《现代汉语词类研究》。北京: 商务印书馆。
 20. 陆志韦 (1951), 《北京语单音词词汇》。北京: 人民出版社。
 21. 吕叔湘 (1964), 谈字、词、句 (上) (《语文常谈》之四), 《文字改革》第5期: 10-13。
 22. 吕叔湘 (1980/1999), 《现代汉语八百词》(增订本)。北京: 商务印书馆。
 23. 马真 (1997/2015), 《简明实用汉语语法教程》。北京: 北京大学出版社。
 24. 裘锡圭 (2013), 《文字学概要》。北京: 商务印书馆出版社。

ՄԵՐԻ ԿՆՅԱԶՅԱՆ - ՉԻՆԱՐԵՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմնաբառեր՝ բառարաններ, չինարեն, 字 zì, 词cí, 辞典 cídiǎn, հիերոգլիֆ, բառույթ, ձևույթ, գլխաբառ

Հոդվածը նվիրված է չինարեն բառարանների տարբեր տեսակներն անվանող տերմինների ուսումնասիրությանը:

Անգլերեն dictionary բառն ունի մի քանի չինարեն համարժեքներ, որոնք են 字书 (zìshū, հիերոգլիֆների գիրք) հնացած և 字典 (zìdiǎn, հիերոգլիֆների բառարան), 词典 (cídiǎn, բառային բառարան կամ պարզապես բառարան), 辞典 (cídiǎn, բառապաշար) ժամանակակից տերմիններն ու 辞书 (císhū, բառարանագրական աշխատություններ) ավելի ընդհանուր տերմինը: Կախված նրանից, թե լեզվական միավորներից որն է հանդես գալիս իբրև գլխաբառ, չինարեն-օտար լեզու բառարանը կարող է լինել հիերոգլիֆների բառարան, բառերի բառարան կամ հիերոգլիֆների և բառերի բառարան:

Չինարենում բառույթը կարող է լինել միավանկ ձևույթ՝ 眼 (yǎn, աչք), 看 (kàn, հայացք), 不 (bù, ոչ) և 了 (le), կամ բազմավանկ ձևույթ՝ բաղկացած երկու կամ ավելի հիերոգլիֆներից, ինչպիսիք են 葡萄 (pútao, խաղող) և 巧克力 (qiǎokèlì, շոկոլադ) բառերը: Ի տարբերություն սովորական բառարանների, որոնցում բազմավանկ ձևույթները դիտվում են որպես ենթագլխաբառեր, չինարեն բառույթների բառարաններում՝ 辞位 (cíwèi), որոնք հիմնականում նախատեսված են չինարենը որպես օտար լեզու ուսուցանելու համար, դրանք դիտվում են որպես առանձին հիերոգլիֆներ: Այս բառարաններում ենթագլխաբառերը տրված են անգլերեն բառերին համապատասխան և կազմված են գլխաբառից կամ գլխավոր բառույթից՝ գումարած մեկ այլ հիերոգլիֆ կամ բառույթ: Օրինակ՝ 眼 (yǎn, աչք) հիերոգլիֆի ենթագլխաբառերն են 眼光 (yǎnguān, տեսողություն), 眼睛 (yǎnjīng, աչք) և այլն, իսկ 葡萄 (pútao, խաղող) բառի ենթաբառերն են 葡萄干 (pútaogān, չամիչ), 葡萄酒 (pútaojiǔ, գինի), 葡萄糖 (pútaotáng, գլյուկոզ) և 葡萄牙 (pútaoyá, Պորտուգալիա):

МЭРИ КНЯЗЯН - О ТЕРМИНОЛОГИИ ВИДОВ КИТАЙСКИХ СЛОВАРЕЙ

Ключевые слова: словари, китайский, 字 zì, 词, 辞 cídǎn, иероглифы, лексема, морфема, заглавное слово

Статья посвящена изучению различных китайских терминов, обозначающих виды словарей на китайском языке.

Английскому слову "dictionary" соответствуют несколько китайских эквивалентов, включая архаичное слово 字 (zìshū, книга иероглифов) и современные термины 字典 (zìdiǎn, словарь иероглифов), 词典 (cídiǎn, словарь слов, или просто словарь), и 辞典 (cídiǎn, лексикон), а также более общий термин 辞 (císhū, лексикографические работы). В зависимости от вида лингвистических единиц, которые рассматриваются в качестве заглавных

слов, китайско-армянские словари могут быть 'словарями иероглифов', 'словарями слов' или 'словарями иероглифов и слов'.

XX-րդ դարում վերածնված հոետորաբանությունը՝ նեոհոետորաբանությունը կամ այլ կերպ ասած՝ փաստարկման տեսությունը, փորձում է մշակել փաստարկման յուրօրինակ սխեմա, որի շնորհիվ բերված փաստարկների համոզվետությունը պետք է հանգեցնի թեզի ընդունմանը: Փաստարկման բրյուսելյան դպրոցի հիմնադիրներ Է. Պերելմանը և Լ. Օլբրեչ-Տիտեկան, որոնք Արիստոտելի դիալեկտիկական տեսության կողմնակիցներն են, ընդգծում են հոետորական հնարների գեղագիտական և համոզվելու /պերսուազիվ/

նպատակների փոխկապակցությունը: Նրանք հոետորական հնարը չեն դիտում որպես մտարտահայտման ձևի շեղում, գտնելով, որ այն մտքի որոշակի տարր է, ապացուցման միջոց: Հետևելով բրյուսելյան դպրոցի դիրքորոշմանը՝ Մ. Անժընոն հնարը համարում է ոչ թե խոսքի փաստարկման շերտը հավելող զարդարանք, այլ դրա համոզվերտությունն ուժգնացնող երևույթ: Ըստ նրա՝ հոետորական հնարների համոզվերտ կամ փաստարկային ուժը դրանց ստեղծած շարահյուսական-իմաստային ռիթմի և մտքի շարժի նրբագեղ զուգորդման մեջ է (Amossy et Koren, 2009):

Կանադացի տեսաբան Ք. Տինդալը, խոսքում հնարների արդյունավետության մասին խոսելիս, շեշտադրում է դրանց երկակի գործառույթը: Դրանք և՛ փաստարկն են ստեղծում, և՛ ընդգծում բերված փաստարկները: Բանադարձման վրա հիմնված փաստարկման արդյունավետությունը նա կապում է հուզականի հետ. բանադարձման կիրառումը լսարանին տանում է դեպի որոշակի զգացմունքային միջավայր, իրագործելով տրված հաղորդակցային խնդիրը, մինչ բանականությունը կսկսի ընտրազատել ստացված տեղեկույթը: Նկարագրված շղթայի լուսաբանման համար նա բերում է անտիմետաբոլի օրինակը, որի դեպքում համոզման նպատակն իրագործվում է լսարանին խոսքի իմաստառիթմային շարժի մասնակիցը դարձնելու շնորհիվ (Fahnestock, 2004, p. 115-135):

Ֆրանսիացի լեզվաբան Մ. Բոնոմը հոետորաբանության և փաստարկման փոխկապակցվածությունը լուսաբանում է հոետորական հնարների գործառական նկարագրի համատեքստում: Ըստ նրա՝ հնարներն իրենց գործառույթով դուրս են գալիս ճոխաբանության շրջանակից՝ դառնալով խոսքի բովանդակության գյուտի (լատիներեն՝ invento) տարրեր: Դրանք խոսքում ի հայտ են գալիս խտացված փաստարկների ձևով: Արիստոտելի առաջ քաշած հոետորական տոպոսի (իրադարձությունների պատկերման համար օգտագործվող պատկերների և մոտիվների մշտական հավաքածու գրական տվյալ համակարգում) և որոշ փաստարկների միջև նմանությունն, ըստ Բոնոմի, վկայում է հնարների և փաստարկման միջև սերտ կապի մասին (Bonhomme 2009):

Վերջին մի քանի տասնամյակում հանրային հաղորդակցական տեսություններում նկատվում է բանադարձումների փաստարկիչ նշանակության նկատմամբ հետաքրքրության աճ: Կարծիք կա, որ հնարներին ներհատուկ է հոետորական բնույթը, և դրանք փաստարկիչ նշանակություն են ստանում որոշակի կառուցվածքային և համատեքստային իրադրություններում, երբ ներգրավվում են փաստարկման գործընթացում: Դրանք նպաստում են հանրային

ընդհանուր համաձայնության (կոնսենսուս) ձևավորմանը, ստեղծում ներդաշնակության և միասնության մթնոլորտ հասցեագրողի և հասցեատիրոջ միջև՝ ցնցելով վերջինիս երևակայությունը և վեր հանելով առկա արժեհամակարգային ընդհանրությունները:

Փաստարկման գործընթացում հռետորական հնարները կատարում են երկակի դեր. մի կողմից հանդես են գալիս որպես փաստարկման համեմատական սխեմայի միջոցով սեփական դիրքորոշումը պաշտպանելու միջոց, և մյուս կողմից՝ հասցեատիրոջ պատկերացումներում մտապատկերներ ստեղծելու ճանապարհով համոզելու միջոց: Ա. Միգունովը կարծում է, որ խոսքում հռետորական հնարները հանդես են գալիս որպես ձևեր, որոնց շնորհիվ երկխոսության մասնակիցների գլխում մտքեր են ծնվում, և ձևավորվում է աշխարհի միասնական պատկերը (Мигунов, 2010, с. 21): Դա նշանակում է, որ այստեղ նույնպես ուշադրությունը սևեռվում է նպատակադրման զուտ հռետորական բնույթի վրա, որի գործառույթն է համոզել, հավաստիացնել, հասնել կոնսենսուսի կամ հաղթահարել դիսսենսուսը: Այս դեպքում փաստարկման խնդրի կատարումը փոխադարձ կապի մեջ է արտահայտչականության և պատկերավորության ապահովման հետ. որքան ավելի հղկված է հռետորական տեխնիկան, այնքան ավելի արդյունավետ է բանադարձված խոսքը: Այսօր արդեն ընդունված է համարել, որ փաստարկման գործառույթը հնարների գործնական ներուժի միայն մի մասն է, որն իրացվում է դրանց հռետորական հիմքի վրա:

Ըստ Մ. Բոնոմի՝ հնարները ներդրվում են բանախոսի կողմից խոսքային հաղորդակցությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով և իրենց գործնական նախորոշումն իրականացնում հետևյալ փոխկապակցված շղթայով.

1. շարադրանքում առաջ են գալիս ակնառու խոսքային շեղումներ, ինչը հնարավոր է դառնում լեզվի ճկունության շնորհիվ,

2. ավելի խոր՝ հոգելեզվաբանական մակարդակում այսպիսի խոսքային շեղումները ստանում են բանադարձային կարգավիճակ,

3. հնարները նպաստում են շարադրանքի մտապահմանը: Իրենց տեղեկատվական հագեցվածության շնորհիվ դրանք ի գորու են ազդել հաղորդակցման վրա՝ գործի դնելով հետևյալ հինգ գործառույթները.

✓ *Էսթետիկ* գործառույթ, երբ հնարները մասնակցում են խոսքի ոճավորմանը:

✓ *Ֆայրիկ* գործառույթ, երբ հնարներն ուժգնացնում են բանախոս-ունկնդիր կապը: Օրինակ, հռետորական հարցի դեպքում

ստեղծվում է երկխոսության պատրանք, մինչդեռ իրականում արձանագրվում է իրողություն, որը հաստատման կարիք չունի:

✓ *Պաթեմիկ* գործառույթ (հունարեն «pathêma» բառից, որը նշանակում է «տառապանք»): Այս դեպքում խոսքի պատկերավորությունն արտահայտում է բանախոսի կամ նրա ունկնդրի հուզական վիճակը: Ի դեպ, 18-րդ դարի ֆրանսիացի տեսաբան Շ. Բատոյի աշխատություններում հանդիպում ենք «հուզիչ հնարներ» ձևակերպմանը, որոնց թվին են պատկանում բացականչությունը, սաստումը, իսկ Բ. Լամին նկարագրում է այնպիսի հնարներ /հիպերբատ, հակադրություն կամ էլիպս/, որոնք ուղղակիորեն պայմանավորված են խոսողի հոգեվիճակով:

✓ *Ճանաչողական գործառույթ*, երբ հնարները հարստացնում են ունկնդրի գիտելիքները: Նման գործառույթ է վերագրվում և լուսաբանվում փոխաբերության օրինակով՝ հաշվի առնելով այս հնարի արդյունավետությունը նորանոր հասկացություններ նշանակելու և երևույթների միջև բովանդակային կապը ցույց տալու համար:

✓ *Փաստարկող* գործառույթ, երբ հնարները նպաստում են համոզման իրականացմանը, ազդում՝ ունկնդրի որոշում կայացնելու պատրաստակամության վրա (Bonhomme 2009):

Այսպիսով, հռետորական հնարով արտահայտման ձևը նման է բովանդակությանն այն իմաստով, որ ունենալով յուրօրինակ շարահյուսական ուրվագիծ՝ այն արտապատկերում է մարդու «հուզաշարժը»:

Նկատենք, որ խոսքի ազդեցությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն օգտագործված լեզվական միավորների իմաստային կողմով. «հուզաշարժը» շատ դեպքերում ավելի ազդեցիկ է, քան առանց խոսքային զարդարանքի ներկայացվող իրական փաստը: Դա ակնհայտ է դառնում հռետորական տեքստը գործաբանական տեսանկյունից դիտարկելիս՝ վեր հանելով այն ողջ զինանոցը, որը գործի է դրվում, որպեսզի հռետորական խնդրի իրագործման համար անհրաժեշտ փաստարկումը համադրվի գայթակղմամբ համոզելու հետ:

Մեր նպատակն առավել առարկայական դարձնելու համար փորձենք տեքստում հռետորական հնարների փաստարկային-գործաբանական գործառույթը լուսաբանել բառակրկնության վրա հիմնված հնարների օրինակով, որոնք մեծ տարածում ունեն ժամանակակից ֆրանսիական քաղաքական հռետորական խոսույթում: Նշենք, որ հռետորաբանության պատմության ընթացքում այս բանադարձումների դասակարգման, խոսքում դրանց դերի և կշռի, բովանդակային կողմի վերաբերյալ տեսաբանների կարծիքները շատ տարբեր են եղել. դրանց

կիրառությունը բնորոշվել է որպես խոսքում դատարկախոսության, թերարժեք ոճի ցուցիչ, նույնացվել է ավելադրության կամ նույնաբանության հետ և այլն: Բառակրկնության վրա հիմնված հնարների առավել համակարգված դասակարգում և մշակում է կատարել Ֆոնտանիեն 19-րդ դարում, որին հղում են կատարում ժամանակակից տեսաբանները: Դրանք համարվում են զորեղ հնարներ, որոնցով պայմանավորված է խոսքի ազդեցության հզորությունը (Molinié 1994, p. 102-111): Այդ հնարներն այսուհետ ընկալվում են ոչ միայն որպես հասցեատիրոջը հուզականություն հաղորդելու, նրան գայթակղելու կամ համոզելու գործիքներ, այլև որպես տեքստի կառուցման տարրեր, մտքերի շաղկապման և անհրաժեշտ հատվածների ընդգծման հնարներ (Dias, 2012):

Բառակրկնության վրա հիմնված հնարները սույն հոդվածում բաժանել ենք երկու ենթախմբի՝ ոչ կանոնավոր հնարներ, երբ կրկնվող լեզվական միավորները տեքստի մյուս բաղադրիչների նկատմամբ համաչափ չեն, և կանոնավոր հնարներ, երբ տեքստում առկա է համաչափությունը:

Ամենատարածված կրկնությունը լիմաստ բառերի կրկնությունն է: Առավել հաճախ հանդիպում է բազմակի կրկնությունը: Որպես օրինակ վերցնենք Ֆրանսուա Օլանդի ելույթը, որում պարզ բառային կրկնությունը համակցվում է կրկնության մեկ այլ հնարով՝ բազմաշաղկապությամբ: Բառային կրկնությունը ընդգծում է, թե հաղորդման հատկապես որ հատվածի վրա պետք է ունկնդիրն ուղղի ուշադրությունը, իսկ բազմաշաղկապությունը խոսքին հաղորդում է հանդիսավորություն և վեհություն: Թերևս դրա շնորհիվ է խոսքը զուգորդվում Աստվածաշնչյան տեքստի հետ:

Servir, servir la République, servir la France, servir au-delà de nous-mêmes, servir les causes, les valeurs que, dans cette élection, j'ai portées et qui auront à être entendues ici en France, et partout en Europe et dans le monde (Hollande, 2012).

Կարող են կրկնվել նաև բառերի առանձին բաղադրիչներ, օրինակ, ձևայինները: Հետևյալ հատվածում հոմեոտելետոնը (բառավերջի ձևայինների կրկնություն) բառական հակադրության /անտիթեզի/ մաս է կազմում: Իմաստային հակադրության միջոցով բանախոսը լսարանին ըմբռնելի է դարձնում իր պնդումը, առաջադրում ճիշտ դիրքորոշում: Համակցված հնարների կիրառությունը խոսքին աշխուժություն և համոզական ուժ է հաղորդում, իսկ բաղաձայնի կրկնությամբ իրացվող բաղաձայնայնությունը (ալիտերացիան) նրան օժտում է բարեհունչ հնչյունական կաղապարով:

Nos dirigeants ont choisi la mondialisation dérégulée, ils la voulaient heureuse : elle s'est révélée affreuse (Le Pen, 2011).

Ֆրանսիական քաղաքական հոետորաբանության մեջ հաճախ են հանդիպում ընդարձակ շարահյուսական զուգահեռ կառույցները, որոնք, մեծ մասամբ, ներմուծվում են սկզբնակրկնության /անաֆորի/ միջոցով, երբ իրադրային նկարագրություններում կրկնվում է նախադասության կառուցվածքը.

C'est avec vous que je veux convaincre les Français, c'est avec vous, que je veux remporter cette élection présidentielle, c'est avec vous que je veux présider autrement une France plus juste (Jospin, 2002).

Այս հնարը փոխանցում է խոսողի հաստատականությունը, լսարանին համակում վստահությամբ: Շարահյուսական զուգահեռ կառույցը հաճախ իրացվում է բարդ շարահյուսական մակարդակում՝ պարբերությամբ, որը երկմաս կառույց է՝ բաղկացած պրոտագիսից (առնվազն երկու շարահյուսորեն զուգահեռ կառույցներ, որոնք ուղեկցվում են հնչերանգի աճով) և ապոդոզիսից (պրոտագիսի բոլոր մասերի համար ընդհանուր է և ուղեկցվում է հնչերանգի անկմամբ): Հետևյալ օրինակում հնարը խոսքին հանդիսավորություն, կշիռ, ռիթմ է հաղորդում, իսկ առաջին դեմքի անձնական դերանվան կրկնությունը պարբերության սկզբում և վերջում վկայում է խոսողի՝ սեփական հեղինակությունն ընդգծելու դիտավորության մասին.

Moi, Général de Gaulle, actuellement à Londres, j'invite les officiers et les soldats français /qui se trouvent en territoire britannique ou qui viendraient à s'y trouver, avec leurs armes ou sans leurs armes, (j'invite les ingénieurs et les ouvriers spécialistes des industries d'armement) qui se trouvent en territoire britannique ou qui viendraient à s'y trouver, à se mettre en rapport avec moi (De Gaulle, 1940).

Ինչ վերաբերում է կանոնավոր կրկնության հնարներին, ապա, նախ՝ դրանք կարող են ոչ միայն փոխանցել խոսողի զգացմունքների ուժգնությունը, այլև իրենց շարահյուսական դիրքով ստեղծում են ակնառու լեզվատրամաբանական կապեր՝ լսարանին տրամադրում մտահանգումներ անելուն: Երկրորդ՝ դրանք խոսքը դարձնում են ոչ միայն պարզ, կոկիկ, դյուրըմբռնելի, այլև գեղեցիկ ու մեղեդային: Կան հնարներ, որոնց դեպքում կրկնվում է մեկ տարր. խոսքի հարևան հատվածների սկզբում՝ սկզբնակրկնություն, խոսքի հարևան հատվածների վերջում՝ վերջնակրկնություն (էպիֆոր), դրանց հանգուցակետում՝ գերհավելում կամ օղակ (պրոսապոդոսիս): Հնարներ էլ կան, որոնք հիմնված են երկու տարրերի կրկնության վրա, դրանք են կցուրդը (էպանաֆոր, նախորդ

նախադասության վերջին բառի կրկնությունը հաջորդի սկզբում) և խաչակերպը (խիազմ):

Ֆրանսիական քաղաքական հռետորաբանությունը հեղեղված է սկզբնակրկնություններով: Դրանք գերազանց կերպով արտացոլում են բանախոսի ինքնավստահությունը թե՛ հանդիսավոր ելույթներում, թե՛ բանավեճերում, թե՛ քաղաքական գովազդում.

Cette guerre n'est pas limitée au territoire malheureux de notre pays. Cette guerre n'est pas tranchée par la bataille de France. Cette guerre est une guerre mondiale (De Gaulle, 1940).

... Chacun mesure la menace latente qui, de ce fait, pèse sur la civilisation. Chacun comprend que rien n'est, pour tous les peuples, plus impérieusement nécessaire que d'organiser en commun la recherche, la production, la détention de l'énergie atomique dans des conditions telles qu'elle serve au développement économique et social, mais qu'elle ne puisse jamais être employée pour la guerre (De Gaulle, 1946).

Il n'y a pas d'identité heureuse lorsque les règles de la République sont à ce point bafouées. Il n'y a pas d'identité heureuse lorsqu'on accepte des accommodements «raisonnables» par souci prétendu d'apaisement (Sarkozy, 2016).

2012 թ. նախագահական ընտրությունների ժամանակ Ֆրանսիայի նախագահի թեկնածու Ֆ. Օլանդը լրագրողի այն հարցին, թե ինչպիսի նախագահ է նա ուզում դառնալ, պատասխանեց 3 րոպե 21 վայրկյան տևած խոսքով, որի ընթացքում 15 անգամ միտքը սկսեց «Moi, président de la République» (Ես՝ Հանրապետության նախագահ) անփոփոխ ձևակերպմամբ և «si je suis» (եթե ես լինեմ) հատվածի զեղչմամբ:

Սկզբնակրկնությունը մատնանշում է, թե ինչ դրույթից կամ մեկնակետից է ելնում դատողությունը, մինչդեռ վերջնակրկնությունը ցույց է տալիս, որ նկարագրված իրադրությունն անշեղդորեն հանգեցնում է բանախոսի մատնանշած արդյունքին: Այս հնարն առաջացնում է անխուսափելիության զգացում, այլընտրանքի բացակայության արձանագրում ունկնդրի գլխում:

Que les entrepreneurs investissent plus facilement, mais que chacune et chacun puisse aussi travailler plus facilement (Macron, 2017).

Վերջինիս օգտագործմամբ Մակրոնը լսարանին մղում է անվերապահորեն հետևելու իր թելադրած մտքերի զարգացման հետագծին:

Անադիպլոզը կից հատվածներում բառային կրկնությունն է: Այս հնարը խոսքին հանդարտ, սահուն աճող զգացմունքայնություն է հաղորդում՝ զուգահեռաբար ստեղծելով մտքի և իրադարձությունների

զարգացման պատկեր: Սա խոսքն օժտում է տրամաբանությամբ և հետևողականությամբ: Այս հնարը բնորոշ է Ֆրանսիայի 5-րդ Հանրապետության 5-րդ նախագահ Ժակ Շիրակի խոսքին:

C'est ainsi que nous inventerons une nouvelle solidarité: une solidarité responsable pour ramener vers l'emploi ceux qui en sont exclus...

C'est une belle ambition. C'est une ambition raisonnable. Et c'est la mienne...

Parce que nous le ferons ensemble. C'est ensemble que nous allons changer l'époque (Chirac 1998).

Նշենք նաև, որ ֆրանսիական քաղաքական քարոզչական տեքստերում շատ են հանդիպում «c'est ainsi que.., c'est nous, qui...» ձևակերպմամբ զուգահիշ կառույցները, որոնք լսարանի և բանախոսի միջև ստեղծում են խորհրդատվական, մտերմիկ և վստահությամբ լի մթնոլորտ՝ դրանով դյուրացնելով հռետորական խնդրի իրագործումը:

C'est nous qui avons conquis les nouveaux droits que la droite presque toujours a combattu historiquement avant de s'y rendre. C'est nous qui avons obtenu les réformes qui ont rendu la société moins dure aux faibles, à ceux qui travaillent et qui gagnent peu (Jospin, 2002).

Գերհավելումը նկարագրում է ոչ միայն խոսողի հոգեվիճակը, այլև օբյեկտիվ աշխարհը, անկախ նրանից, թե այն նյութական է, թե հոգևոր: Դա մտքի փակ շարժ է, որը կուռ տրամաբանություն և կապեր է ստեղծում երևույթների միջև:

Truands raisonnables, profiteurs du crime, criminels organisés, proxénètes, trafiquants, maffiosi, jamais vous ne les trouverez dans ces situations-là. Jamais ! (Badinter, 1981).

Հռետորական սկզբնակրկնության և վերջնակրկնության միաժամանակյա կիրառումը ստեղծում է մեկ այլ բանադարձում, այն է՝ հանգույցը: Այս հնարն իմաստային առումով ասույթին ոչինչ չի ավելացնում, սակայն դրա կիրառումը պահանջում է հռետորական վարպետություն:

On vous a souvent trompés. Je le sais.

On vous a parfois menti. Je le sais.

On vous a même trahis. Je le sais.

Et pourtant vous êtes là ! (Sarkozy, 2007).

On nous dit que la gauche n'a aucune chance, mais rien n'est écrit. [...]

On nous dit que l'extrême droite est qualifiée d'office pour le second tour, mais rien n'est écrit. On nous dit que François Fillon est déjà le prochain président de la République, mais rien n'est écrit (Valls, 2016).

Խաչաձևում (խիազմ) է կոչվում այն հնարը, որում խաչաձև դասավորությամբ կրկնվում են խոսքային տարրերը: Այն կիրառվում է հուզական միջավայրի ստեղծման նպատակով: Կա խաչաձևման երկու տեսակ: Առաջին դեպքում խոսքային տարրերը պարզապես հայելային կերպով կրկնվում են («c'est bonnet blanc et blanc bonnet»), երկրորդում՝ շարահյուսական կապերը փոփոխված են: Իմաստային կապերի փոփոխությամբ ընթացող խաչաձևումը կոչվում է դերափոխական բառակրկնություն (անտիմետաբոլ): Այն օգտագործվում է խոսքի հարուստ բովանդակությունն ընդգծելու համար: Ֆրանսերեն խոսքում հանդիպում է հատկապես այս տեսակը: Բերենք մեկ օրինակ Ֆ. Օլանդի նախընտրական քարոզչական խոսքից.

Le président-candidat est désormais candidat-résident (Mitterrand, 1965).

Այսպիսով, նոր հռետորաբանության ուշադրության կենտրոնում փաստարկում պարունակող խոսքն է: Այն առանձնանում է հատուկ խոսողական և հաղորդակցական նպատակներով, խոսքային ակտերի յուրատեսակ հետևողականությամբ: Ընդ որում, այստեղ փաստարկումը դիտարկվում է որպես հաղորդակցական գործընթաց, որի նպատակը հասցեատիրոջը որևէ մտքի կամ գաղափարի հանգեցնելն է: Այս դեպքում այն ներկայանում է որպես խոսքային գործունեության հատուկ տեսակ, որն ունի բարդ խոսքային ակտի կառուցվածք, գործում է տեքստային մակարդակով և բաղկացած է միևնույն նպատակով միավորված պարզ խոսքային ակտերից: Փաստարկման նպատակը լսարանի վրա ներազդելն է, խնդիրը՝ ասվածի վերաբերյալ ցանկալի դիրքորոշումների ձևավորումը: Փաստարկման խնդրի կատարումը կապված է արտահայտչականության հետ, որն էլ, իր հերթին, իրագործվում է հռետորական հնարների բանեցմամբ:

Եզրակացություն

Հռետորական հնարների էսթետիկ և համոզչական հատկանիշները փոխկապակցված են այն աստիճան, որ ժամանակակից մի շարք տեսաբաններ «հռետորական հնար» եզրույթը փոխարինում են «փաստարկման հնար» եզրույթով, ընդ որում հնարները դիտարկվում են առավելապես խոսքի բովանդակության տեսանկյունից՝ համարվելով մտքի տարր, ապացուցման միջոց: Դրանք իրենց համոզման գործառույթը կատարում են ունկնդրի գլխում մտապատկերներ առաջացնելու միջոցով, ստեղծում հուզական ներդաշնակության մթնոլորտ բանախոսի և հասցեատիրոջ միջև: Միաժամանակ պետք է նշել, որ բառակրկնությամբ արտահայտված բանադարձումների շարքում

փաստարկման առավել մեծ ներուժ ունեն սկզբնականություններն ու վերջնականությունները, որոնք էլ ամենից հաճախ հանդիպողներն են ֆրանսիական քաղաքական հոետորաբանության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Amossy R. et Koren R., Rhétorique et argumentation : approches croisées. «Rhétorique et argumentation», N2, 2009.
2. Badinter R., Discours à l'Assemblée nationale contre la peine de mort, 17 septembre 1981.
3. Bonhomme M., De l'argumentativité des figures de rhétorique. «Rhétorique et argumentation», N2, 2009.
4. Chirac J., Discours radiotélévisé de M. Jacques Chirac, président de la République, sur la stabilité internationale, l'avènement de l'euro, les valeurs républicains, la sécurité et la liberté, et la libération des capacités d'innovation notamment grace à la réduction de l'impôt et des charges sociales, Paris le 31 décembre 1998.
5. De Gaulle Ch., L'appel du 18 juin du général de Gaulle, 1940 (<https://www.gouvernement.fr/partage/8708-l-appel-du-18-juin-du-general-de-gaulle>).
6. De Gaulle Ch., Discours prononcé à Bar-le-Duc le 28 juillet 1946 (<https://mjp.univ-perp.fr/textes/degaulle28071946.htm>).
7. Dias D., Les figures de répétition: une tradition rhétorique à l'œuvre dans "Atemschaukel" de Herta Müller. « La clé des langues: cultures et langues étrangères». Université de Nice-Sophia-Antipolis, 2012 (<http://cle.ens-lyon.fr/allemand/les-figures-de-repetition-une-tradition-rhetorique-a-l-oeuvre-dans-atemschaukel-de-herta-muller-172289.kjsp>).
8. Hollande F., Discours de victoire de François Hollande à Tulle, La Croix, le 06/05/2012 (<https://www.la-croix.com/Actualite/France/Discours-de-victoire-de-Francois-Hollande-a-Tulle- NG -2012-05-06-803200>).
9. Fahnestock J., Figures of Argument. University of Maryland. «Informal Logic». Vol. 24, No.2, 2004, pp. 115-135.
10. Frans H. van Eemeren and Rob Grootendorst., A Systematic Theory of Argumentation The pragma-dialectical approach. Cambridge University Press, New York, 2004, p. 1.
11. Jospin L., Déclaration de M. Lionel Jospin, Premier ministre et candidat à l'élection présidentielle, sur les politiques de la gauche, les valeurs socialistes et républicaines, la fonction présidentielle («présider

- autrement»), le rôle de la France à l'heure de la mondialisation, l'aide au développement, la justice sociale, la laïcité et le refus du communautarisme, Paris le 7 avril 2002.
12. Jospin L., Déclaration de M. Lionel Jospin, Premier ministre et candidat à l'élection présidentielle, sur la modernisation et le rôle de l'Etat, l'avenir de la jeunesse, la politique familiale, l'éducation et l'emploi, les énergies renouvelables et le développement durable, Grand Quevilly le 9 avril 2002 (<http://www.lioneljospin.net>).
 13. La Grande Encyclopédie Larousse. Rhétorique, 1971-1976, p. 11826 (<http://www.larousse.fr/archives/grande-encyclopedie/page/11826>).
 14. Le Pen M., Discours de Marine Le Pen, Présidente du Front National, lors du Congrès de Tours des 15 et 16 janvier 2011 (<https://dial.uclouvain.be/memoire/ucl/fr/object/thesis%3A11124/datastream>)
 15. Macron E., Déclaration de M. Emmanuel Macron, Président de la République, sur une politique économique en faveur de la création d'entreprise et de l'innovation, à Paris le 15 juin 2017. (<https://www.vie-publique.fr/discours/203019-declaration-de-m-emmanuel-macron-president-de-la-republique-sur-une-p>).
 16. Mitterrand F., Candidature de François Mitterrand aux élections présidentielles de 1965.
 17. Molinié G., Problématique de la Répétition. «Langue Française. Les figures de rhétorique et leur actualité en linguistique», 1994 N 101, pp. 102-111.
 18. Quintilien et Plin le Jeune: oeuvres complètes avec la traduction en français [et] publiées sous la direction de M. Nisard, 1865, pp. 316-346.
 19. Sarkozy N., Déclaration de M. Nicolas Sarkozy, ministre de l'intérieur et de l'aménagement du territoire, président de l'UMP et candidat à l'élection présidentielle, sur sa volonté de mettre la fraternité et l'autorité au cœur de son projet politique, Villebon-sur-Yvette le 20 mars 2007.
 20. Sarkozy N., Identité heureuse ou malheureuse : la place des musulmans en France au cœur de la primaire de la droite, publié le 25.08.2016. (<https://www.france24.com/fr/20160825-identite-heureuse-malheureuse-juppe-sarkozy-musulmans-france-islam-primaire-droite>).
 21. Valls M., Déclaration lors de sa candidature à la primaire de la gauche (5 décembre 2016) de Manuel Valls.

22. Նազարյան Ա. Հ., Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-հայերեն-ռուսերեն ուսումնական բառարան, «Ապոլոն», Ե., 1993:
Nazaryan A. H., Lezvanakan terminneri franseren-hayeren-r'owseren owsowmnakan bar'aran, «Apolon», E., 1993 (In Armenian):
23. Матвеева Т. В., Учебный словарь: русский язык, культура речи, стилистика, риторика. М., 2003, сс. 377-378.
Matveeva T. V., Uchebnyj slovar': russkij jazyk, kul'tura rechi, stilistika, ritorika. M., 2003, ss. 377-378 (In Russian).
24. Мигунов А. И., Соотношение риторических и аргументативных аспектов дискурса. РАЦИО. ru. - 2010. - № 4. - С. 21.
Migunov A.I., Sootnoshenie ritoricheskikh i argumentativnyh aspektov diskursa. RACIO. ru. - 2010. - № 4. - S. 21 (In Russian).

**ЖАКЛИН МИНАСЯН - АНАЛИЗ АРГУМЕНТАТИВНОГО ПОТЕНЦИАЛА
РИТОРИЧЕСКИХ ПРИЕМОВ, ВЫРАЖЕННОГО ПОСРЕДСТВОМ
ЛЕКСИЧЕСКОГО ПОВТОРА (НА ПРИМЕРЕ СИНТАКСИЧЕСКИХ ФИГУР
РЕЧИ)**

Ключевые слова: риторический прием, фигуры речи, лексический повтор, аргументация

Цель статьи - проиллюстрировать аргументативно-прагматическую функцию риторических приемов на примере популярных в современной французской политической риторике способов, основанных на повторении. Цель аргументации - воздействовать на аудиторию, задача – сформировать желаемые позиции относительно сказанного. Реализация задачи аргументации связана с выразительностью, которая, в свою очередь, осуществляется за счет использования риторических приемов. Эстетические и убедительные особенности риторических приемов взаимосвязаны до такой степени, что термин «риторический прием» часто заменяют термином «аргументативный прием», более того, приемы рассматриваются как элемент мысли, средство доказательства.

**ZHAKLIN MINASYAN - ANALYSIS OF THE ARGUMENTATIVE POTENTIAL
OF RHETORICAL DEVICES ON THE EXAMPLE OF SYNTACTIC FIGURES
OF SPEECH**

Keywords: *rhetorical device, figure of speech, verbal repetition, argumentation*

The purpose of the article is to illustrate the argumentative-pragmatic function of rhetorical techniques using the examples of repetition which is very popular in modern French political rhetoric.

The purpose of argumentation is to influence the audience. The implementation of the task of argumentation is associated with expressiveness, which, in turn, is realized through the use of rhetorical techniques. The aesthetic and persuasive features of rhetorical devices are interrelated to such an extent that the term “rhetorical device” is often replaced by the term “argumentative device”; moreover, devices are considered as an element of thought.

Ներկայացվել է՝ 25.10.2023 թ.
Գրախոսվել է՝ 12.11.2023 թ.

**ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ԴԻՍԵՎՈՐՈՒՄԸ
ՌԵՄԱՐԿԻ «ԵՐԵՔ ԸՆԿԵՐ» ՎԵՊՈՒՄ**

ԷՄՄԱ ՄԻՐԶՈՅԱՆ

Համառոտագիր

Ցանկացած իրավիճակ, որը մարդու մոտ առաջացնում է հոգեցնցում, բնութագրվում է որպես ծանր հոգեկան վիճակ, որն առաջանում է մեկ կամ կրկնվող իրադարձության արդյունքում: Այն ունի գերհզոր բացասական ազդեցություն անհատի հոգեկանի վրա: Այդօրինակ հոգեցնցում ապրում են զինվորները պատերազմական իրադրություններում: Հետպատերազմյան համախտանիշը դրսևորվում է որպես տրավմատիկ վիճակ և առաջանում է մարտական իրավիճակում առկա տարաբնույթ գործոնների ազդեցությամբ: Հետպատերազմյան համախտանիշը լայն հետաքրքրության առարկա է դարձել գեղարվեստական գրականության մեջ:

Գերմանացի գրող Էրիխ Մարիա Ռեմարկը, լինելով պատերազմի մասնակից, իր բոլոր ստեղծագործություններում ներդրել է պատերազմի մի մասնիկ՝ իր անձնային փորձով մեկնաբանելով պատերազմի էությունը և դրա միջով անցած սերնդի ճակատագրի վրա ազդելու դրա հետևանքները: Պատերազմն է, որ ծնում է կորուսյալ սերունդ և խեղում մարդկանց հոգիները՝ հանգեցնելով հիասթափության: Վեպն անդրադառնում է սիրո և ընկերության խնդիրներին, պատերազմի խնդիրներին և դրա հետևանքներին, հետպատերազմյան շրջանի հասարակությանը: Պատերազմը բերում է ավերածություններ ու զրկանքներ, ինչպես նաև ճգնաժամ՝ և՛ տնտեսական, և՛ սոցիալական, կորստյան են մատնվում հասարակության բոլոր բարոյական հիմքերը՝ հուսահատություն, սիրելիների կորուստ, Աստծո հանդեպ հավատքի կորուստ: Ռեմարկն իր ողջ ստեղծագործությամբ փորձում է ընթերցողին փոխանցել պատերազմի սարսափելի դեմքը, սակայն թույլ չի տալիս կորցնել սեփականն այդ համատեքստում:

Հիմնաբառեր՝ պատերազմ, հետպատերազմյան համախտանիշ, Էրիխ Մարիա Ռեմարկ, «Երեք ընկեր», կորուսյալ սերունդ

Ներածություն

Արդի աշխարհաքաղաքական փոփոխությունների պայմաններում հետպատերազմյան համախտանիշի ուսումնասիրությունը ժամանակի հրամայականն է: Պայքարի միջոցով այդ համախտանիշի հաղթահարման գործում մեծ նշանակություն ունի գրականությունը: Մասնավորապես, Էրիխ Մարիա Ռեմարկն իր «Երեք ընկեր» վեպում գերխնդիր է դրել ցույց տալու, թե ինչպես կարելի է պատերազմ անցնելով և ապրելով հասարակական գաղջ միջավայրում՝ լինել լավատես և ամեն ինչում փորձել գտնել երջանկության մասնիկ:

Հոդվածի գիտական նորույթը Է.Մ.Ռեմարկի «Երեք ընկեր» վեպը նոր դիտանկյունից լուսաբանելն է: Մենք գտնում ենք, որ Է. Մ. Ռեմարկի «Երեք ընկեր» վեպը պայքարի խորհուրդ ունի, Ռեմարկը մեկնաբանվում է ոչ թե խղճահարության առաջացման լույսի ներքո, այլ պատերազմի անթույլատրելիությունն ընդգծելու լույսի ներքո:

Հոդվածի տեսական նշանակությունը դրսևորվում է հետպատերազմյան համախտանիշի սահմանումների, բնութագրիչների ներկայացման ձևով, ինչը նորույթ է և նմանօրինակ ուսումնասիրություն դեռ չի կատարվել: Գործնական նշանակությունը դրսևորվում է նրանում, որ նորովի է լուսաբանվում «Երեք ընկեր» վեպը՝ հետպատերազմյան համախտանիշը վերածելով պայքարի մոտիվի:

Հոդվածի նպատակն է ներկայացնել հետպատերազմյան համախտանիշի դրսևորումը Ռեմարկի «Երեք ընկեր» վեպում, ինչին հասնելու համար մեր առջև խնդիր ենք դրել ներկայացնել հետպատերազմյան համախտանիշի էությունը, դիտարկել «Երեք ընկեր» վեպը:

Հետպատերազմյան համախտանիշի էությունը

Ռազմական հոգեբույժների մասնագիտական համայնքի կողմից լայնորեն օգտագործվում է «հետպատերազմյան համախտանիշ» հասկացությունը, որը բովանդակում և արտացոլում է ռազմական գործողությունների հետևանքով առաջացած ներոզների հոգեվերլուծական հայեցակարգը: Հոգեցնցումը, որն առաջանում է պատերազմական գործողությունների հետևանքով, առաջացնում է անտանելի հոգեկան ապրումներ, տառապանքներ: Այս առումով տեղին է մեջբերել Զ.Ֆրոյդի մոտեցումը, ըստ որի «ցանկացած իրադարձություն, որն առաջացնում է սարսափի, վախի, ամոթի, հոգեկան ցավի, կորստի տանջալի զգացում, կարող է տրավմատիկ ազդեցություն ունենալ հոգեկանի վրա: Տուժողի զգայունությունը որոշում է այս միջադեպի տրավմատիկ դառնալու հավանականությունը» (Փրեյդ, Ференցի, Абрахам, Зиммель, Джон, 2012, с. 104):

Ըստ ռուս հոգեբան Ե. Սնեդկովի և Օ. Սիրոպյատովի կարելի է առանձնացնել հոգեկան տրավմայի կամ հոգեցնցման երկու տեսակ՝ *արտաքին իրադարձություններին արձագանքման ժամանակ դրսևորվող տրավմա* և *կումուլյատիվ տրավմա*՝ որոշակի հոգեցնցում առաջացնող իրադարձության շարունակական դրսևորման հետևանքով առաջացող տրավմա: Հոգեվերլուծության նորագույն բացահայտումները հնարավորություն են տալիս տրավմատիկ ռազմական ներոզները դիտարկել դրանց պատճառների վերագրման տեսության կամ կաուզալ ատրիբուցիայի տեսանկյունից, այսինքն՝ բացահայտել պատճառահետևանքային կապերը՝ «ցանկացած ներոզի հիմքում ընկած ռեպրեսիան» (Сыропятов, Дзержинская, 2020, с. 68):

Ա.Կարդիները դեռևս 1941 թ. կատարած առաջին համակարգային ուսումնասիրություններում հետպատերազմյան համախտանիշն անվանել է «խրոնիկական ռազմական ներոզ»: Հենվելով Զ.Ֆրոյդի գաղափարների վրա՝ Ա.Կարդիները ներմուծեց մի նոր հասկացություն, որն անվանեց «կենտրոնական ֆիզիոներոզ», որը մեկնաբանեց որպես շրջակա միջավայրին հարմարվելուն նպաստող անձնային մի շարք գործառույթների խախտում: Հեղինակը գտնում էր, որ հետպատերազմյան համախտանիշն ունի ինչպես ֆիզիոլոգիական, այնպես հոգեբանական բնույթ: Նա առաջինն էր, ով տվեց հետպատերազմյան համախտանիշի համապարփակ նկարագիրը. 1) դյուրագրգռություն, 2) հանկարծակի դրսևորվող գրգռիչներին արձագանքելու անզուսպ ցանկություն, 3) տրավմատիկ իրադարձության հանգամանքների վրա ֆիքսվածություն, 4) իրականությունից փախուստ, 5) անկառավարելի ագրեսիվ ռեակցիաների նախատրամադրվածություն (Kardiner, 1941, p. 258):

Եթե հետպատերազմյան համախտանիշը դիտարկենք կենսաբանական տեսանկյունից, ապա այն, ըստ Հ.Օփենհեյմի ուղեղի հյուսվածքներում տեղի ունեցող մոլեկուլային փոփոխությունների հետևանք է, որոնք կապված են մեխանիկական և հոգեկան գործոնների համակցված ազդեցության հետ: Նման փոփոխությունները, հեղինակի կարծիքով, առաջանում են ծայրամասային նյարդերի ցնցման հետևանքով, որոնցում առկա են մոլեկուլային փոփոխություններ, որոնք ծայրամասից փոխանցվում են կենտրոնական նյարդային համակարգի տարբեր մասեր՝ ինտենսիվության ու տարածվածության բնութագրիչներով սահմանելով «տրավմատիկ ներոզի» կլինիկական պատկերի պոլիմորֆ ախտանշանները (Oppenheim, 1889, p. 214, մեջբերումն ըստ՝ Сукиасян, Солдаткин, Снедков, Тадевосян, Крючкова, 2020, с. 149-156.):

Հետպատերազմյան համախտանիշը տեսական գրականության մեջ մեկնաբանվում է որպես հետտրավմատիկ սթրեսային խանգարման տեսակ (ՀՏԽ)՝ հոգեկան և վարքային խանգարում, որն առաջանում է տրավմատիկ փորձառությունից, որը ցնցել է, վախեցրել կամ սպառնացել է մարդու կյանքին: Չնայած Ա. Կարդիների կողմից արված դիտարկումներին՝ ՀՏԽ-ն որպես տերմին հայտնվել է միայն 1980-ականներին: ԱՄՆ-ի քաղաքացիական պատերազմում այն կոչվում էր «զինվորի սրտի համախտանիշ», Առաջին համաշխարհային պատերազմում՝ «հրետանային ցնցում», Երկրորդ համաշխարհային պատերազմում խոսում էին «ռազմական ներոզի» մասին:

Օ. Գ. Սիրոպյատովը, Ն. Ա. Ձերուժինսկայան (Сыропятов, Дзержинская, 2020, с. 69) գտնում են, որ հետտրավմատիկ սթրեսային խանգարումն առաջանում և զարգանում է ծայրահեղ սպառնալից կամ սարսափելի իրադարձության կամ իրադարձությունների շարքից հետո և բնութագրվում է երեք «հիմնական» դրսևորումներով.

- տրավմատիկ իրադարձություն(ներ)ի վերապրում ներկայում որպես վառ կրկնվող հիշողություններ, որոնք ուղեկցվում են վախով կամ սարսափով, հետադարձ հայացքներով կամ մղձավանջներով,

- իրադարձություն(ների) մասին մտքերից և հիշողություններից խուսափելով կամ իրադարձություն(ներ)ին նմանվող գործողություններից կամ իրավիճակներից խուսափելով,

- շարունակական սպառնալիքի սուբյեկտիվ զգացողության վիճակ՝ զգոնության կամ ուժեղացված վախի ռեակցիաների տեսքով:

Հետպատերազմյան համախտանիշը ռազմական հոգեցնցումների շարքում առաջնային տեղ է զբաղեցնում: Այն 3-4 անգամ ավելացնում է բանակում հոգեկան խանգարումների թիվը և 10-50%-ով նվազեցնում է ռազմական ուժերի մարտունակությունը: Մասնագիտական գրականության մեջ ընդգծվում է այն հանգամանքը, որ հետպատերազմյան համախտանիշը առանձնահատուկ սոցիալական նշանակություն ունի վետերանների շրջանում (Литвинцев, Снедков, 1997, с. 54., Снедков, 1997. с. 456): Նույն հեղինակների կողմից կատարվել են հետազոտություններ, որոնք վկայում են հետևյալի մասին. ռազմական գործողությունների արդյունքում դրսևորվում են ոչ հոգեբուժական պրենոզոլոգիական խանգարումներ՝ ներոտիկ և ախտաբանական ռեակցիաներ (52.2%), կախվածություն առաջացնող կամ ադրիկտիվ վարքագիծ (27.6%) և վիրավորների և կոնտուզիա ստացածներ մոտ խիստ դյուրագրգիռ վիճակներ (5.4%):

Պատերազմին մասնակցության պայմաններում զինվորների մոտ ամրագրվում են հատուկ կոմպենսատոր-հարմարվողական

փոփոխություններ, որոնք որոշում են ձեռքբերովի անձնական աններդաշնակության բնորոշ գծերը՝ խրոնիկական անհանգստության և իմպուլսիվության յուրօրինակ համակցության տեսքով: Հետազոտությունների մեջ հետաքրքրական է վիրավորում ստացածների հետպատերազմյան համախտանիշի մեկնաբանությունը: Հեղինակները նշում են, որ բնութագրական են դառնում վիրավորվելուն նախորդող իրադարձությունների մասին հիշողությունները, վիրավորման պահի հոգեցնցումը, դրա հետևանքներին արձագանքելու պահի հիշողությունները՝ ելնելով նման իրադարձություններին արձագանքելու անհատական մոտեցումներից, վիրավորման հետևանքով առաջացած մորֆոֆունկցիոնալ խանգարումները(Литвинцев, Снедков, 1997, с. 54, Снедков, 1997, с. 456):

Վերը բերված դիտարկումներից կարելի եզրակացնել, որ հետպատերազմյան համախտանիշի առկայության դեպքում բնութագրական են դառնում՝

- պատերազմական իրադարձությունների վերաբերյալ ցավալի հիշողությունները
- կրկնվող տանջալի երազները, մղձավանջները
- պատերազմական իրադարձության կրկնման հանկարծակի զգացողությունը կամ կրկնման վախը
- պատերազմական իրադարձություններին հնարավոր վերագրվելիք դեպքերի ժամանակ նոր ցնցումը
- պատերազմական իրադարձությունների տարելիցների ժամանակ ծանր ապրումներ ունենալը
- առօրյա իրադարձությունները, աղմուկը պատերազմական իրադարձություններին նմանեցնելը (օրինակ, տոնական հրավառությունը՝ կրակահերթին)
- նման իրավիճակներում խիստ արագ արձագանքումը, պատերազմական իրադարձություններին բնորոշ գործողությունների կատարումը (օրինակ, փորձել ընտանիքի անդամներին պատսպարել):

ՀՏԽ-ի ժամանակ անցյալի տրավման խանգարում է մարդուն նորմալ ապրել ներկա պահին: Պատերազմի ժամանակ իրադարձությունները, որոնք սպառնում են անձի կամ նրա մտերիմների կյանքին, վերապրում են.

➤ **մարտական գործողությունների մասնակիցները.**

ՀՏԽ-ն կարող է զարգանալ ոչ միայն այն փաստից, որ մարտի ժամանակ մարդը անհանգստանում է իր կյանքի համար, այլ նաև այն փաստից, որ նա տեսնում է, որ այլ մարդիկ տառապում են դաժան

բռնությունից: Նա կարող է ինքն իրեն ապահով լինել, բայց հենց սպանության կամ մարդկանց սպանության ականատեսը կարող է լինել տրավմատիկ իրադարձություն, որը հրահրում է ՀՏՄԽ:

➤ **քաղաքացիական անձինք.**

ՀՏՄԽ-ն կարող է զարգանալ ֆիզիկական և սեռական բռնության, ոմբակոծության ժամանակ իրենց և իրենց սիրելիների համար վախի, մահվան սպառնալիքների հետևանքով: Եվ նույնիսկ եթե անձը՝ ինքն ապահով է, այն լուրը, որ իր սիրելիին պատերազմ են ուղարկել, գերել կամ ինչ-որ այլ բան սպառնում է նրա կյանքին, կարող է տրավմատիկ իրադարձություն լինել նրա համար և առաջացնել ՀՏՄԽ:

➤ **փախստականները.**

Փախստականները կարող են զարգացնել ՀՏՄԽ այն բանից հետո, երբ նրանք ականատես են եղել բռնության կամ ինքներն են բռնության ենթարկվել, կամ իրենց անապահով զգալ, եթե իրենց կամքին հակառակ պահվել են ինչ-որ տեղ, օրինակ՝ հարցաքննության ժամանակ կամ բանտում:

Ընդհանրացնելով՝ փաստենք, որ հետպատերազմյան համախտանիշը բավականին բարդ հասկացություն է, որը մեկնաբանվել է տարբեր գիտությունների մեջ: Հետպատերազմյան համախտանիշի դրսևորման հավանականությունն ուղղակիորեն կախված է սթրեսային ազդեցության ծանրությունից և գործողությունների կիզակետում գտնվելու տևողությունից:

Ռեմարկը՝ որպես «պատերազմի երգիչ»

Էրիխ Մարիա Ռեմարկին կարելի է համարել «պատերազմի երգիչ»: Դրամատուրգ և սցենարիստ Ռեմարկն իր ողջ ստեղծագործական ուղին նվիրեց իր իսկ ապրումների ռեֆլեքսիային, որոնք որպես խարան կրեց իր ողջ կյանքի ընթացքում: Նրա ստեղծագործություններում երևում է Առաջին աշխարհամարտի ողջ «բեռը»: Այդ վերապրումներն արտացոլված են հեղինակի «Երազների դասականը» (1920), «Կայարան հորիզոնի վրա» (1927), «Արևմտյան ճակատում նորություն չկա» (1929), «Երեք ընկեր» (1938), «Վերադարձ» (1951) վեպերում: Ռեմարկը 1916թ-ին զորակոչվել է բանակ, որտեղ էլ 1917թ-ի հուլիսի 31-ին ստացել է վիրավորում ձախ ոտքից, աջ ձեռքից և պարանոցից, ինչի հետևանքով պատերազմի մնացած տարիներն անցկացրել է Գերմանիայի զինվորական հոսպիտալում: Այդ ամենն արտացոլվել է Ռեմարկի «Երեք ընկեր» վեպում՝ տարբեր հերոսների կերպարներում: Վեպը դարձել է բեսթսելլեր և վաճառվել է շուրջ 5 մլն օրինակով:

«Երեք ընկեր» վեպը. Ռեմարկի հերոսների հմայքը

20-րդ դարի 30-ականների սկզբին ավարտելով «Արևմտյան ճակատում նորություն չկա» վեպը, որտեղ հեղինակը ճշգրտությամբ բնութագրում է պատերազմի հակառակ կողմը՝ անմարդկայնության, սիրո և բոլոր արժեքների կորստի նկարագրությամբ, Ռեմարկն սկսում է աշխատել «Երեք ընկերը» վեպի վրա (Бергелъсон, 1989, с. 410.):

1938 թվականը նշանավորվեց «Երեք ընկեր» վեպի հրատարակմամբ, որի գլխավոր հերոսները կորուստների առումով բախտակից անբաժան ընկերներն են, առաջնագծի նախկին զինվորներ, որոնք ժամանակին շրջապատված էին արյունոտ հայացքներով, մղձավանջով և մահվան վախով: Հիմնական տեսարաններն ու իրադարձությունները, սակայն, կատարվում են ոչ թե պատերազմի, այլ համաշխարհային տնտեսական ճգնաժամի ժամանակ, որը տևել է մինչև 1933 թվականը: Վեպը կարելի է բնութագրել որպես հետպատերազմյան վերապրումներ:

«Երեք ընկերը» վեպ է պատերազմի միջով անցած մարդու՝ քաղաքացիական կյանքին հարմարվելու մասին: Ներկայացվում է երեք երիտասարդների պատմությունը, որոնք միասին գնացել են դպրոց, այնուհետև մեկնել են ռազմաճակատ և կարողացել են պահպանել իրենց ընկերությունը: Նրանց վերադարձը հայրենիք դժվար թե կարելի է երջանիկ անվանել՝ Գերմանիան հետպատերազմյան ճգնաժամի մեջ է, մարդիկ բաժանված են, ոչ ոք վստահություն չունի ապագայի նկատմամբ:

Այն օրը, երբ գլխավոր հերոսը՝ Ռոբերտ Լոքսամփը, դառնում է երեսուն տարեկան, նա վերհիշում է անցյալի իրադարձությունները՝ ծանր պատերազմը, ռազմաճակատում ընկերների կորուստը, զինվորագրումը, Քյոսթերի վիրավորվելը, ընկերների թունավորումը գազից և տուն վերադառնալը: Այս հիշողությունների հետ մեկտեղ վեպում մշտապես դրսևորվում է սթափ լավատեսությունը, որով հնարավոր է լինում: Լավատեսության դրսևորումներին ականատես ենք լինում քաղաքական իրադարձությունների շարժընթացում:

Վեպը առանձնանում է նրանով, որ հիմնված է իրական իրադարձությունների վրա: Ռոբերտ Լոքսամփը հենց ինքը՝ Ռեմարկն է, վեպն ինքնակենսագրական է: Ռեմարկն այստեղ ներկայացնում է մեր կողմից արդեն իսկ նշված՝ իր վիրավորվելու պատմությունը, ռազմական հոսպիտալում անցկացրած օրերը: Օտտո Քյոսթերի և Գոթֆրիդ Լենցի կերպարները ևս իրական են: Ռեմարկի կնոջ իրական գծերն արտացոլված են Պատրիսյա Հոլմանի կերպարում: Փորձելով գրքում ներկայացնել նաև իր կնոջ հիվանդության պատմությունը (Ռեմարկի կինը հիվանդ էր թոքախտով)՝ Ռեմարկը Պատրիսյա Հոլմանի կերպարում

արտացոլում է տառապանքները և պատերազմի վատագույն հետևանքները:

Եվ անկախ ամեն ինչից, կարծում ենք, որ ներկայումս էլ, ինչպես և վեպում, պետք է հիմնաքարային դարձնել հետևյալ մոտեցումը. «Հնազանդություն, մտածեցի ես: Ի՞նչ կարող է փոխել այն: Պայքարե՛լ, պայքարե՛լ- ահա միակ բանը, որ մնում է անել այս խառնաշփոթության մեջ, որում, վերջ ի վերջո, այսպես, թե այնպես պետք է պարտություն կրես: Պայքարել հանուն այն մի փոքրի, որը քեզ համար թանկ է: Իսկ հնազանդվել կարելի է նաև յոթանասուն տարեկանում» (Ռեմարկ, 1972, էջ 261):

Պատերազմական մղձավանջին զուգընթաց հերոսները շարունակում են պայքարել: Երբ Պատրիսյա Հոլմանը գտնվում է հիվանդանոցում և մահամերձ վիճակում բողոքում է Ռոբերտ Լոհքամփին, թե այդ ամենը վերջ չունի, Ռոբերտը պատասխանում է, որ կյանքն իսկապես այնքան վատն է, որ վերջ չունի: Պատրիսյա Հոլմանը հարցնում է, թե արդյո՞ք ծաղիկներն էլ են վատ հորինված, ինչին Ռոբերտը պատասխանում է, որ ամեն բան, առանձին վերցրած, պարզապես հիանալի է, բայց ամբողջության մեջ փուչ բան է: Այստեղ Ռեմարկն ընդգծել է, որ երջանկությունը պահերի ու մանրուքների մեջ է, և չպետք է կենտրոնանալ մշտապես և ամբողջի մեջ երջանիկ լինելու վրա: Այստեղ դրսևորվում է Ռոբերտի/Ռեմարկի, պատերազմ անցած կարծր բնավորություն ունեցող այս մարդու, վերափոխումը: Եվ ինչպես ընդգծում է Ռեմարկը «Սերը փչացնում է բնավորությունը»: Իսկ մենք ավելացնենք, որը սերը նաև բուժում է, բուժում է նաև այն վերքերը, որոնք թողել է պատերազմը:

Հետպատերազմյան համախտանիշը «Երեք ընկեր» վեպում

Նախ փաստենք, որ վեպն ինքնին ամբողջությամբ արտացոլում է Ռեմարկի մոտ դրսևորվող հետպատերազմյան համախտանիշը: Հեղինակն ամբողջ ընթացքում ներկայացնում է իր ապրումները, իսկ հերոսների վերապրումները հենց իր և իր կյանքում եղած իրական մարդկանց ապրումներն են:

Հետպատերազմյան համախտանիշի առաջին դրսևորմանը հանդիպում ենք վեպի առաջին էջում, երբ ներկայացվում է Քյոսթերի վիրավորվելը. «1917 թվական: Ֆլանդրիա: Ես ու Միդենդորֆը գինու մառանից մի շիշ կարմիր գինի առանք: Ուզում էինք մի քիչ քեֆ անել: Բայց չստացվեց: Լուսադեմին անգլիացիք փոթորկալից կրակ բաց արեցին: Կեսօրին Քյոսթերը վիրավորվեց: Մայերն ու Պետերսը սպանվեցին երեկոյան: Իսկ գիշերվա դեմ, երբ հոյս ունեինք հանգստանալու և այդ շիշը թացեցինք, սկսվեց գազային գրոհը:

Հեղձուցիչ ամպերը սողոսկեցին դեպի բլինդաժները: Ճիշտ է, մենք ժամանակին հագանք մեր հակագագերը, բայց Միդենդորֆի դիմակը պատռվեց: Երբ նա նկատեց այդ, արդեն ուշ էր: Մինչ նա կպոկեր դիմակն ու մեկ ուրիշը կփնտրեր, ահագին գազ կուլ տվեց, ու նրա բերանից սկսեց արյուն գալ: Նա մեռավ հաջորդ առավոտյան. դեմքը կանաչել էր ու սևացել, իսկ վիզն ամբողջապես քրքրվել էր: Միդենդորֆն ուղղակի պատահոռոտել էր իր վիզը, որպեսզի շնչելու հնար ունենար:

1918: Այդ արդեն հոսպիտալումն էր: Երկու օր առաջ ժամանեց վիրավորների մի նոր խումբ: Ծանր վիրավորներ էին: Սպիտակ վիրակապերով կապված վերքեր: Տնքոցներ: Ամբողջ օրը գնում ու գալիս էին օպերացիոն նեղլիկ սայլակները: Երբեմն նրանք վերադառնում էին դատարկ: Իմ կողքին պառկած էր Իոզեֆ Շտոլը: Նրա ոտքերն արդեն չկային, բայց ինքը դեռ չգիտեր այդ մասին: Նա չէր կարող դատեսնել, քանի որ այնտեղ, ուր ոտքերը պետք է լինեին, ցցված էր մետաղալարերից սարքված մի կարկաս, որը ծածկված էր վերմակով: Ասենք, նա չէր էլ հավատա դրան, քանի որ նրա ոտքերը դեռ ցավում էին: Մի գիշերում մեր հիվանդասրահում երկու հոգի մեռան: Մեկը մեռավ շատ դժվարությամբ, երկար չարչարանքներից հետո» (Ռեմարկ, 1972, էջ 12):

Հետպատերազմյան համախտանիշի դրսևորման ակնատես ենք լինում, երբ կարծես ամեն ինչ լավ է, հերոսները ապրում են իրենց բնականոն կյանքով, ունեն աշխատանք, ընկերներից մեկի կյանքում հանդիպել է իրական սեր: Սակայն հենց այդ ժամանակ Ռոբերտ Լոհքամփը մտածում է. «Գրպանիցս մի սիգարետ հանեցի: Ճիշտն ասած, ես կարող էի լիովին գոհ լինել: Վատ չէի ապրում, աշխատանք ունեի, ուժեղ էի, դիմացկուն և, ինչպես ասում են, լիովին քաջառողջ, բայց և այնպես ավելի լավ կլիներ երկար-բարակ չմտմտալ: Հատկապես, երբ մենակ ես: Եվ այն էլ՝ երեկոները: Թե չէ մեկ էլ տեսար՝ անցյալը հառնում է ու վրադ չոում իր մեռած աչքերը: Բայց նման դեպքերի համար գոյություն ունի օդին» (Ռեմարկ, 1972, էջ 8):

Հերոսների կյանքում մշտապես առկա է պատերազմի, միջավայրի նկատմամբ վախը: Մշտական ուրախությունների, ընկերների հետ հանդիպումների, աշխատանքի և սիրո մեջ նրանք գտնում են արտաքին աշխարհից առանձնանալու ուղի: Նրանք անջատ են այս աշխարհից և մարդկանց այն հանրույթից, որոնք պատերազմն ընկալում են որպես քաղաքական խնդիրների լուծման միջոց՝ քարոզելով բռնությունը և միլիտարիզմը: Այս ամենի գծով ատելությունը հանգեցնում է Լենցի մահվան: Քաղաքը անհանգիստ է: Փողոցներում ցուցարարներ են: Կրակոցներ: Լենցն առավոտից գնացել է ցույցի: Ռոբերտը և Օտտոն անհանգստացած գնում են նրան փնտրելու: Հանդիպում են ֆաշիստ

ցուցարարներին: Լսելով հոետորին՝ հասկանում են, որ մարդիկ հավաքվում են, որովհետև տարված են նրանով, որ ինչ-որ մեկը հետաքրքրված է նրանցով: Ընկերները գտնում են Լենցին: Գնում են դեպի մեքենան: Այդ ժամանակ հայտնվում են չորս երիտասարդներ, որոնցից մեկը կրակում է Լենցի վրա: Քեստերն անօգուտ փորձում է բռնել նրանց: Լենցը մահանում է: Քաղաքամերձ սրճարաններից մեկում Ռոբերտը տեսնում է Լենցի վրա կրակողին: Վերջինս փախչում է: Քեսթերը մեկնում է նրան գտնելու: Ռոբերտին իր հետ չի վերցնում Պատի պատճառով: Սակայն առաջինը սրիկային գտնում և սպանում է Ալֆոնսը (ձեռնարկության սեփականատեր, Լենցի լավագույն ընկերը): Ռոբերտը գտնում է Օտտո Քեսթերին և հաղորդում է, որ ընկերոջ վրեժը լուծված է:

Վեպում հետպատերազմյան համախտանիշը դրսևորվում է նաև նրանում, որ ընկերները, մասնավորապես, Ռոբերտը, յուրաքանչյուր կյանքի դրվագ կապում են պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրադարձության հետ: Օրինակ, երբ Ռոբերտը նորից հանդիպում է Պատի հետ, որոշում են մեքենայով շրջել քաղաքում: Ռոբերտը սովորեցնում է նրան մեքենա վարել: Զգում են իրենց ասես պատմել են միմյանց ողջ կյանքը: Գնում են բար, որտեղ հանդիպում են Լենցին և նրա հետ գնում են Լունապարկ: Օղակներ են գցում կեռիկների վրա, և քանի որ ճակատում ժամանակ էին սպանում կեռիկների վրա գլխարկներ գցելով, բազում իրեր են շահում: Բաժանում են իրենց շահումը իրենց հետևող մարդկանց և իրենց են պահում միայն գինին: Նմանատիպ զբամուռք եղել է պատերազմի ժամանակ, և Ռոբերտը միանգամից ընկնում է այդ հիշողության մեջ: Շուրջ ամեն ինչ իրեն հիշեցնում է պատերազմի մասին:

Հետպատերազմյան համախտանիշը դրսևորվում է մեկ այլ դրվագում ևս: Ռոբերտը Պատրիսիայի հետ գտնվում է ծովում: Ծովում լողալուց հետո Ռոբերտը սիրած կնոջ հետ ժամանակը վայելելու փոխարեն, անկախ իր կամքից հիշում է պատերազմական իրադարձությունները: «...Ես սկսեցի ինչ –որ բան վերհիշել, ինչ-որ մի օր, երբ ճիշտ այսպես պառկած էի...

Այդ 1917 թվականին էր: Մեր վաշտը գտնվում էր Ֆլանդրիայում և անսպասելիորեն մի քանի օրով մեզ ետ քաշեցին Օստենդ՝ հանգստի: Մայերն էր, Գոլդհոֆֆը, Բրայերը, Լյուտկենսը, ես և էլի ինչ-որ մեկը: Մեզանից շատերը ծովափում չէին եղել, և այդ փոքրաթիվ օրերի ընթացքում, կյանքի և մահվան միջև ընկած այդ անիմանալի ընդմիջումը վեր ածվեց արևով, ավազով և ծովով լեցուն ինչ-որ վայրենի, կատաղի մի վայելքի: Ամբողջ օրերով մենք թափված էինք լինում ծովափին, մեր մարմինները հանձնելով արևին: Լինել մերկ, առանց զենքի ու

համազգեստի, այդ ինքնըստինքյան հավասարազոր էր մի ամբողջ աշխարհի: Մենք խենթի պես վազվզում էինք ծովափին, գրոհով մտնում ծովը, զգում մեր մարմինները, շնչառությունը, մեր շարժումները ամբողջ այն ուժով, որը կապում էր մեզ կյանքի հետ: Այդ ժամերին մենք ինքնամոռացության էինք տրվում, մենք ուզում էինք ամեն ինչ մոռանալ: Բայց երեկոյան, մթնշաղին, երբ հորիզոնի այն կողմից գորշ ստվերները շարժվում էին ծովի գունատվող մակերևույթի վրա, ավեբախության որոտին դանդաղորդեն խառնվում էր մեկ ուրիշ ձայն, այն ուժեղանում էր, և վերջապես մի խուլ սպառնալիք անլսելի էր դարձնում ծովի աղմուկը: Այդ ռազմաճակատի հրետանային նախապատրաստության աղմուկն էր: Եվ այն ժամանակ միանգամից ընդհատվում էին խոսակցությունները, վրա էր հասնում մի լարված լռություն, մարդիկ բարձրացնում էին գլուխներն ու ականջ դնում, և տղաների զվարթ դեմքերին, որոնք զվարճացել էին մինչև հալից ընկնելը, անսպասելի ու կտրուկ երևում էր զինվորի խստաշունչ արտահայտությունը, և էլի ինչ որ մի ակնթարթի ընթացքում զինվորների դեմքերով անցնում էր խոր ու հոգեմաշ զարմանքի ու թախիծի արտահայտություն, որի մեջ կար այն ամենը, ինչ մնացել էր չասված. արիություն, դառնություն, կյանքի ծարավ, պարտք կատարելու կամք, հուսահատություն, միաժամանակ հույսն ու խորհրդավոր վիշտը նրանց, ովքեր դեռ ջահելությունից դատապարտված էին մահվան: Մի քանի օրից սկսվեց մեծ հարձակումը, և արդեն հուլիսի 3-ին վաշտում մնաց միայն երեսուներկու մարդ: Մայերը, Գոլդհոֆֆը և Լյուտկենսը սպանվեցին»: /էջ 236/

Լոկամպը «կորուսյալ սերնդի» ներկայացուցիչներից է: Հերոսը՝ որպես այդպիսին, երիտասարդություն չի ունեցել, այն ժամանակ էլ ցավ ու տանջանք է տեսել: Իսկ պատերազմից հետո Ռոբերտը չէր կարող հանգիստ ապրել, քանի որ նրա աչքի առաջ անընդհատ նկարներ էին անցյալից: Թվում էր, թե ոչ մի վայրկյան նրան բաց չէր թողնում: Սարսափելի հիշողություններից միակ փրկությունը ակոհողն էր: Ուստի վեպը ցույց է տալիս, որ Ռոբերտը հաճախ է գալիս բար խմելու: Նա կարծես փորձում է թաքնվել իրականությունից: Լոկամպը գնում է հասկանալով, որ իր համար ապագա չկա մի երկրում, որտեղ նորից պատերազմ է հասունանում:

Պատրիսիան պատերազմի զոհ է նույնքան, որքան Ռոբերտը, Քյոսթերը և Լենցը: Մանուկ հասակում նա շատ քիչ է սնվել, ինչի պատճառով հիվանդություն է ձեռք բերել: Դա նույնպես հետպարերազմական համախտանիշի մի տեսակ է: Ընդհանուր առմամբ պարտադիր չէ անմիջապես մասնակցել պատերազմական

գործողություններին, որպեսզի պատերազմը անդառնալի հետք թողնի մարդու կյանքի վրա:

Բոլոր ընկերներն էլ, նաև Պատրիսիան, յուրաքանչյուր իրադարձության մեջ տեսնում էին վտանգ: Նույնիսկ այնտեղ, որտեղ այն բնավ չկար: Մեր կարծիքով՝ այս ախտանիշը առավել բնորոշ է Լենցին:

Բացի դրանից, մենք կարծում ենք, որ հետպատերազմյան համախտանիշը բնորոշ է ոչ բոլոր պատերազմական վեպերին: Ռեմարկը իր «Երեք ընկեր» վեպում չի փորձել առաջին պլան մղել այդ հատկանիշը, այլ պարզապես այդ հատկանիշի դրսևորման միջոցով ցույց է տվել պատերազմի անթույլատրելիությունը և սարսափը: Այլ կերպ ասած՝ հետպատերազմյան համախտանիշը Ռեմարկի «Երեք ընկեր» վեպում ոչ թե օբյեկտ է կամ նպատակ, այլ միջոց է:

Եզրակացություն

